

Hentchak :

Organe Central

DU PARTI

HENTCHAKISTE

ՀԱՅԵՐԱՆԵՐԻ

Journal Arménien

mensuel

XX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵԱԹԱՂԱՆԻ ԹԵՕՐԻԱՆ

«Սահմանք քաջաց՝ զէնն իւրեանց, որքան հասանի՝ աչքան ունի»։ — Արամին վերագրուած և Խորենացու մեկ հաղորդած այդ խօսքը իր մէջ բովանդակում է Հին քաղաքակրթութեան ամբողջ նշանաբանը։ Ժողովրդական, մարդկայնական, անհատական իրաւունք այդ քաղաքակրթութիւնը չէր ճանաչում. նա ամէն ինչ տեսնում, բացատրում և արդարացնում էր միայն Ոյժն աչքի առաջ ունենալով. գիտէր միայն մի իրաւունք, այն՝ որ ո՛ւր զէնք ունի, նա էլ կունենայ այն, ինչոր կցանկանայ, ուստի փափաքած ամէն բան անսահման կերպով ունենալու համար, հարկաւոր էր որ այդ զէնքը միշտ կտրուի, միշտ հատու լինէր։

Օսմանեան պետութեան զեկամարիչ զսակարգը Հին քաղաքակրթութեան այդ նշանաբանին հաւատարիմ թարգմանը և հարազատ հետևողը եղաւ՝ սկզբից մինչև այսօր. նա ամէն ինչ տեսել է բացարձակ Ոյժի, ԵԱԹԱՂԱՆԻ մէջ։ Երթուղիի օրերից եաթաղանով նա կազմակերպուեց, եաթաղանով նա աւերիչ ուլիս դարձաւ՝ իր տարածականութեան ժամանակին և եաթաղանով էլ ուղղով է դուրս գալ իր ներկայ Հոգեվարքային դրութիւնից։

Իր անկման օրերին իսկ՝ թուրք տիրապետող զսակարգը անկեղծ, ուժգին և տեսական փորձ չարեց ժողովրդական իրաւունք ճանաչել, — լինի սահմանափակ շրջանի մէջ իսկ — և այդ իրաւունքից բղխած քաղաքական հաստատութիւնների մէջ տեսնել օսմանեան երկրի փրկութիւնը՝ որպէս պետութեան։ Ոչ, նա այդ չարեց, չուզեց և չի էլ ուզում անել. նա ինքն իր դաւանած Ոյժին, եաթաղանի հաւատածին հաւատարիմ մնալով՝ շարունակեց ամէն ինչ տեսնել սուրի շեղի մէջ և վարուել նոյն այն նշանաբանով, ինչոր Արամին էր, թէև այն ժամանակուանից մինչև ցարդ հարիւրաւոր դարեր անցած լինէին և իրերը ու նրանց շրջանակը բոլորովին փոխուած։

Որքան որ Վիեննայի պարիսպների տակից յետ ընկրկուեց յետոյ օսմանի աշխարհակալը հարկաւորուեց իր եաթաղանը ճկել օտար եաթաղանների առաջ, որ իրանից աւելի զօրաւոր էին և ինքը մտաւ միայն պաշտպանողական դրութեան մէջ, — այ-

նուամենայնիւ նա միշտ եաթաղանի թէօրիային հաւատարիմ մնաց իր ներքին գործերը վարելու մէջ. այդ եաթաղանի վրան նա հաստատեց իր յարաբերութիւնը նուաճող ժողովրդների հետ, միշտ մտքից չհանելով այն՝ թէ եաթաղանն էր միայն, որ պիտի վար իրեն ճողպրելու արտաքին ճնշող ոյժերից և ոյժալիսով իրեն և՛ս աւելի մեծ սպարէզ տալու։

Եաթաղանի իր տեսութեանը հաւատարիմ մնալով, օսմանի տիրապետողը երբ ինքը չփորձեց, ինքը անկարող եղաւ, իրեն անբնորոշակ նկատեց պետական նոր Հիմունքներ ստեղծել՝ ժամանակակից քաղաքակրթութեան շուղին հետևելով, — նա ամենայն կարճ՝ մըտութեամբ իր մաղձը թափեց այն հպատակ ուղիների վրային, որոնք անկարող լինելով տանելու բուռնապետութեան տուած կեանքի խեղդիչ պայմանները՝ ուղղւած էին մի փոքր ազատ շնչել, մի փոքր մարդավայել կեանք ունենալ, ու դրա համար էլ ցանկ էին ապատաղական սերմեր, բեղմնաւորել այն իրենց արեան բլուրներով, իրենց դարեւոր աշխատանքով։ Օսմանին այդ հոսանքից էլ անկարող եղաւ օգտուելու, նա չուզեց նոր հոսանքի հետ դաշնակցել, նրա հետ համաձայնել, յարաբերութեան մէջ մտնել, այլ իր եաթաղանին կրթնած, միայն զէնքի տեսութիւնն իրեն նշանաբան անելով, մինչև վերջ աշխատեց անխնայ փշրել այն բոլորը՝ ինչոր չէր համապատասխանում իր տուած, իր շրջանակած կեանքի պայմաններին. դիտել ուղղւած էր յաւիտենական օրէնքներ գծել կենդանիներին։

Ու այդ անբնական դրութեան մէջ, որպէսզի արտաքին եաթաղանների սպառնալիքից, նրանցից եկած վտանգից ինքը մի կերպ ազատ լինէր — Թիւրքիայի դռները նա լայն բացեց նրանց առաջ. ի՛նչ, օսմանեան պետութիւնը շատ ընդարձակ էր, նրա մէջ ամփոփուած ժողովուրդները ծծուելու շատ արիւն ունէին և կարող էին առատութեամբ բաւարարուել տալ ամէնքին էլ. փոքր էէ՛թէ այդտեղից հպատակը արիւնքամ պիտի լինէր կրկնակի շահագործման շղթաների տակ. այդ բոլորը ևս ոչինչ, քանի որ դա տիրապետողին միջոց պիտի տար արտաքին անմիջական վտանգից զերծ լինելու, նրանց իր դաշնակիցը դարձնելու «ներքին չարիքներին» արմատախիլ տանելու համար և իրեն էլ պայման կամաց կամաց եա-

Թաղանքը ամրացնելու, սրելու, որպէսզի ժամանակի ընթացքում Հնարաւորութիւն ձեռք բերել կարողանար նոյն այդ դրսեցիկներին յետ մղելու . . . Պատրաստե՛ք, պատրաստե՛ք:

Փոխանակ իր ներքին ոյժերից օգտուելու, փոխանակ իր կեանքը վերականգնելու ներքին, ազդակների վրան յենուելով, օսմանցին կուրօրէն շարունակեց իր փրկութիւնը տեսնել արտաքին կեղեքիչ ազդակների հակամարտ շահերից և ձգտումներից օգտուելուն մէջ:

Ուրիշներին խաղալիք դարձնել ուղղորդ՝ ինքը նրանց խաղալիքը դարձաւ:

Օսմանի տիրապետողի կոչը քաղաքականութիւնը մասնաւորապէս արտացոլացաւ հայերիս նկատմամբ:

«Հայաստան՝ առանց հայի» — այս դարձաւ իր սիրելի նշանաբանը և այդ Հայաստանի, այդ հայի միակ յանցանքն էր եղել, որ նա ցանկացել էր ապրել մարդավարի, ունենալ այն իրաւունքները, ինչոր ժամանակակից ժողովրդների համար անձեռնմխելի է համարուել: Հայը թշնամի չէր կարող լինել մի նորագոյն պետութեան, ընդհակառակը, նա այդպիսի մի պետութեան ամենաթմնական և շինիչ ազդակներից մէկը կլինէր, բայց ո՞վ է յանցաւորը, որ նա սուլթանական բացարձակութեան դէմ մաքառելու մէջ ընտրեց այն ուղին, ինչոր պատմութիւնը թեւադրել, ստիպողականութիւն էր դարձրել և սուլթանականութեան անցեալը վաւերացրել:

Գաղանք՝ անցեալի մէջ թափուած մեր արիւնից չլաւեցաւ:

Այժմ հայ հայրենիքի բաժինն է դարձրել սո՛վ, լուելանց և ակնյայտի կոտորած, մասսայական գաղթ, թշուառութիւն և սուլթանական մահապիւռ արհաւիրք — ու այդ բոլորը կանխապէս գծադրուած, որոշուած մի շատակագծի համաձայն:

Այստեղ, հայ հայրենիքում, գործուած է դիւային մի ծրագիր, որի նմանը հայի թէ պատմութիւնը մէկ-երկու հատ արձանագրած լինի:

Բայց ինչ էլ լինի, եթէ քաղաքական խնդիրների պատճառով մարդիկ պիտի մեռնեն, ապա նրանք պէտք է մեռնեն սպանողի դէմ կռիւ մղելով՝ մինչև վերջին րոպէն:

Մենք ոչ թէ չենք մեռած, այլ հակառակ ամէն հալածանքի, հակառակ ամէն նախագրծերի, մենք դեռ կանք, կենսականութիւն ունենք և բարձրօրէն յայտարարում ենք, որ մենք մեզ թող չենք տալ ասպարէզից քաշուել: Եւ Սուլթանականութեան արհաւիրքին յեղափոխական արհաւիրքի խտացումով, սաստկացումով է, որ մենք կպատասխանենք, — ահա մեր վճիռը:

Բոպէները ծանր են, պատասխանատու, հետեւանք, յառաջացնող:

Իրերի այս վերին աստիճանի վճռական նշանակութիւն ստացած ժամանակին, երբ այլևս կաս-

կած անգամ չկայ, որ սուլթանականութիւնը շեշտակի կերպով ձգտում է դէպի եր չարախիղ նպատակների իրագործումը, միթէ՞ արտասահմանի հայ ժողովուրդը ձեռքերը ծալած պիտի նստի և առ առաւելն ողբայ կամ մեղքը գցի զանազան դիւանադէտների կամ եւրոպական կառավարութեանց չկամութեան և քարասրտութեան վրայ: — Ո՛չ, այդ հին ձեւերը մի անգամ ընդ միշտ մի կողմ պիտի թողնել, դրանցից օգտակարութիւն չկայ. լարով, ողբալով, դիւանագետների դռները զարկելով, ո՛չ ծածկա-Հայը կարող է սովի ճիրաններից և վերահաս կործանումից ապաստուել և ո՛չ էլ ոճրագործ սուլթանի բազուկը յետ կեցնել:

Այս չարաբաստիկ պայմաններում՝ արտասահմանի հայ ժողովուրդը, որ բաւականին ստուար թիւ է կազմում և տնտեսապէս էլ շատ լաւ ապահովուած է, — իր անմիջական պարտականութիւնը պիտի համարի ն ի թ ա կ ա ն, դրամական օգնութեան հասնել Վստի, Բիթլիկի, Մուշի և այլ այն բոլոր վայրերի հայ ժողովրդին, որոնց ջնջելը, ցրուելը սուլթանի գաղափարական փայփայանքներից մէկն է եղել՝ սկզբից մինչև այսօր, և այժմս աւելի քան յանդուգն կերպով գործադրութեան մէջ է դրել:

Պատմութեան մէջ շատ դէպքեր, ցաւալի իսկ, չէին կարող պատահել և չպէտք է պատահէին էլ, եթէ դէպքերի խմորման ժամանակ ամէն ոք հաւասարապէս իր պարտականութիւնը ճանաչելու գիտակցութիւնը և հեռատեսութիւնը ունենար: Յօս ունինք որ արտասահմանի «ԲԱԽՏԱԼՈՐՆԵՐԸ» ներկայ ծանրակշիւ հանգամանքներում կանեն այն՝ ինչ որ պէտք է և հրամայական պարտականութիւն է որ անեն:

Սովեալին, թշուառին օգնելը յեղափոխական կուսակցութեան բուն գործը, նրա իսկական անելիքը չէ, պահանջի այդ մասին լրացումս պէտք է տան լեզու հողի վրայ կանգնողները. մենք մեր սեպհական գործը, մեր անելիքը ունենք:

Թէ ի՞նչ է անում հայ երիտասարդութիւնը, իր պարտէզի մշակութեամբ պարսպող երիտասարդութեան մասին չէ մեր խօսքը, այլ այն ազնիւ, անձնուէր և հայ ժողովրդի իղձերը արտայայտող երիտասարդութեան, որ տառնեալ տարիներից ի վեր գերմարդկային ճիգեր թափելով՝ ծածկա-Հայ ազատագրութեան գործի ասպարէզը մղուեց և մինչև վերջ իր պարտականութեան զինուորը մնաց: — Վստանգը մեծ է, շօշափելի. ժամանակը չէ՞ աւելորդ նկատումներ մի կողմ թողնել և ընդհանուր շարքերով վերակրկնել փիլիսոփայի ստածը՝ «ն ա ի ս ա պր ե լ և ա պ ա փ ի լ ի ս ո փ ա յ ե լ»:

Անշուշտ՝ նոյն իսկ ապրելու համար հարկաւոր է փիլիսոփայել, բայց երբ նոյն այդ փիլիսոփայութիւնն էլ քեզ ասում է թէ ապրելու, կեանքի իրաւունք չի տրուած քեզ և մի Եաթաղանի ներկայա-

ցուցիչ է որ այդ կեանքը ուղղում, ցանկանում, աշխատում է ոչնչացնել, ուստի նոյն այդ կեանքի պահպանութիւնը քո առաջին նուիրական պաշտականութիւնը և գործը պիտի լինի:

Ո՛չ Եւրոպայի, ո՛չ էլ «արդար» գործի սկզբունքի վրան է, որ մենք մեր յոյսը պիտի դնենք, մենք ամէն բանից առաջ, և գլխաւորապէս, մեր յոյսը մեզ վրայ պիտի դնենք. մեր փրկութիւնը, մեր ազատութիւնը պիտի գայ միայն մեր սեպհական ջանքերի, մեր գործունէութեան հետեւանքով, բաւական չէ «արդար» գործ, հարկաւոր է նրան իրականացնել:

Կատարած բռնակալի առաջ տեղի չպէտք է տալ, քանի որ նա մինչև վերջ իր մտադրածի յետեւիցը պիտի երթայ. հարկաւոր է ընդդիմադրութիւն, հարկաւոր է ոչ թի դէմ ոչ ժ: Եւ այդ ոչ ժը մենք՝ հայ ժողովուրդը ունի, հարկաւոր է միայն դուրս հանել և ներդաշնակել այն. — ահա դա պիտի լինի ինքն իրեն հաւատարիմ մնացող Հայ երիտասարդութեան անմիջական անելիքը:

Հարկաւոր է խելացի և համապատասխան գործունէութեամբ դէմ կանգնել, թող չտալ որ հայ ժողովուրդը գոհ երթայ մի գազանի տմարդի բնագոյներին:

Հարկաւոր է երկիր թափել կռուող, ընդդիմադրող, կազմակերպող ոյժեր, հարկաւոր է չեղափոխական կազմակերպութեանց ամենամեծ չափով ծաւալ տալ. դէնքի, ռազմամթերքի պաշարը աւելացնել, ժողովրդապաշտպան խմբեր կազմել բոլոր վտանգուած վայրերում ու ինքնապաշտպանութեւ, չը թողնել որ հայ հայրենիքը թափուր լինի, մինչև որ համաժողովրդական ոյժի ամբողջութիւնը երևան գայ՝ ընդհանուր ապստամբութեան ձևով:

Ո՛չ ցոյց, ո՛չ պարտիզանական կռիւ, ո՛չ մանր շարժում և յարձակողական դիրք — այլ ինքնապաշտպանութիւն — ահա բոլորի պահանջը:

Եւ այս բոլորի մէջ աչքից բաց թողնելու չէ մի այլ պայման, — այն է՝ Հայաստանի մէջ բռնակալութիւն ունեցող այլազան տարրերի համերաշխական աջակցութեանը ձգտել, նրանց հասկացնելով որ բարեփոխուած, ազատագրուած Հայաստանի բերած առաւելութիւններից նոյնքան իրենք պիտի օգտուեն, որքան և՛ հայ ժողովուրդը:

«Մա՛րտ կամ մա՛հ, կռիւ արիւնխանձ կամ ոչնչութիւն» — այդ ճակատագրին է մեզ բերել հասցըրել սուլթանի բռնակալութիւնը:

ԹԻՒՐԿԻԱՅԻ ՇՈՒՐՁԸ

ԸՆԹԱՑԻԿ ԽՆԴԻՐՆԵՐ

Մեր հրապարակագրութեան ոչնախանձելի պայմանները, հրապարակագրերի հաւասարապէս ազատ ծիծոյց չունենալը հարցերը լաւ լուսաբանելու և իրենց հակադիր հայեացքների տէր եղողների հետ անկաշկանդ կերպով երես առ երես գալու՝ յարուցում խնդիրների աւելի բազմակողմանի

ուսումնասիրութեամբ — այդ բոլորը դրել են իրենց ոչնչանկալի գրօշմը հասարակական բնաւորութիւն ունեցող Հայ հրատապ խնդիրների ուղղութեան և ուժգնութեան վրայ:

Այնտեղ՝ ուր կարելի էր շուտով համաձայնութեան գալ և ցանցառ ոյժերի փոխարէն աւելի խտացած ճիգերով հասարակաց թշնամու դէմ կանգնել, ու փոխանակ գործի մըդւելու, աշխատանքի ասպարէզ իջնելու իր վահանով և նիզակով — մենք տեսնում ենք տարտամ խօսքեր, խուճապական բացականչութիւններ, կցկաւոր հակախօսութիւններ, լըքում, յուսահատութիւն: Եւ այդ բոլորը, դժբախտաբար, յաճախ արդիւնք են իրականութիւնը սխալ ըմբռնելուն և հակառակորդի ասած-խօսածները թիւր կերպով հասկանալուն: Համոզմունքների անվերաձեւութիւնը յարգի է, բայց այդ համոզմունքը իր դրական հիմունքները պիտի ունենայ՝ լուսաւորուած գիտութեան ճառագայթով, եթէ ոչ՝ ամէն ինչ ասիական ընդդիմախօսութիւն կմնայ:

Եւ հէնց դրա համար էլ, մենք ի սրտէ ողջունում ենք մեր այն բոլոր երիտասարդ հրապարակասօսներին, ինչին մեր իսկ կատարի հակառակորդները, որոնք՝ գրչի մի-երկու փոխանակութիւններից և ծեծուբառքից չեռոյ՝ փոխանակ իրենց պարտականութիւնը կատարած համարելու, քրթմիջների տարափի տակ լքուելու և անկիւն մտնելու ու այնտեղից մարդկային գործերի ունայնութեան վրայ ողբալու, — տղամարդի պէս մինչև վերջ իրենց սեպհական ջանքերով կառուցուած պատնէշի վրան են կանգնում և այնտեղից իրենց նիզակը ճօճում մինչև վերջին բոպէ, երբ այլևս դիմադրել չի կարելի ու հարկաւոր է անձնատուր լինել հակառակորդին ու նրա կռակին անցած պայքարը շարունակել: Յառաջադիմութիւնը հէնց դրա մէջն է, հրապարակագրական աւաթնութիւնը հէնց այդ էլ պահանջում է. հասարակական շահը այդտեղից ո՛չ միայն օգտուած է, այլ նոր թափ է ստանում:

Մենք պատմական մի ստակալի շրջադարձի մէջ ենք դրուում, երբ մոտաւորական ոյժերի վրայ ահաղին պատասխանատուութիւն է ծանրանում, իսկ այդ պատասխանատուութիւնը մասամբ իր լրումն կառնի այն ժամանակ, երբ ամէն կարող մտաւորական, իր ոյժերի սահմանների մէջ, կաշխատի տնջակցել հասարակական խնդիրների լուսաբանութեանը և նրա կիրառութեանը, — մեր խօսքը սօցիալիստ հրապարակասօսների մասին է:

Մենք մեզ հաւատարիմ մնալով՝ մենք կը շարունակենք հանրական նշանակութիւն ունեցող խնդիրների նկատմամբ անվերապահ կերպով մեր հայեացքները տալ, մեր հակառակորդներին էլ կմնայ ճակատաբաց առաջ գալ և իրենց հակախօսութիւնները դնել, ու մենք կընդդիմախօսենք, լոկ հատարական շահը աչքի առաջ ունենալով:

Անցնենք մեր օրակարգի խնդիրներին:

ԱՆՋԱՏԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ. — Ծարակարծիքութիւններ և ընդհանուր շփոթութիւններ յառաջացնող խնդիրներից մէկն էլ է անջատականութիւնը (separatismo):

Ի՞նչ է անջատականութիւնը, — կանխամտածուած, միառումնաւոր քաղաքական մի գործունէութիւն, որով մի ժողովուրդ, — իր օրգանը եղող կուսակցութեան կամ կուսակցութիւնների միջոցով — ձգտում է դատուել, բաժանուել այն ընդհանուր պետութիւնից, որի որ մի մասն էր ինքը կազմում: Ուրեմն՝ անջատականութիւնը քաղաքական գործունէութեան մի եղանակ է՝ որ ունի իր որոշեալ մօտակայ նպատակը, նպատակ՝ որի իրագործումը քաղաքական փոփոխութիւններ պիտի առաջացնէ մի որոշեալ երկրի մէջ:

Արդ, սօցիալիզմի տեսակէտով, անջատականութեան կարելի է հետեւել: Ուրիշ խօսքով՝ մի սօցիալիստ, մի կօլլեկտիվիստ անջատական քաղաքականութեան հետապնդելով՝ իրական սօցիալիստ լինելուց չի՞ զգարել և դրանով

աւելի մնասած չի՞ լինիլ սօցիալիստական ու պրոլետարական ազատագրութեան գործին և ճատնուիլ ազգայնականութեան (նացիօնալիզմի) հովիւին: Քանի որ Մարքսիզմը քաղաքական կեդրոնացումը համարում է ճակատագրական և անխուսափելի, ուրեմն և անհրաժեշտ մի պայման ընդհանուր պրոլետարական ազատագրութեան գործին, հետևաբար՝ պատմութեան անցեալ ոյժերի հաստատած մի ընդարձակ պետութիւնից նրա մի ծառը անջատելը, զտելը հակասօցիալիստական, հակապրոլետարական մի գործ էր լինիլ՝ կատարուած մի սօցիալիստի ձեռքով: Ինչո՞ւ զատել՝ փոխանակ արդէն եղածի՝ ձեռք սօցիալիստական գործունէութիւն սկսելու: Թօսենք օրինակով. — անցեալի ձեռք գործող ոյժերը Հայաստանը և հայ ժողովուրդը երեք ծառերի են բաժանել, նրա մի ձեռք ծառը Թիւրք Բուսականութեան մի կտորն է կազմում. արդ, քանի որ պատմութիւնը, արդար թէ անարդար, կազմել է ժողովուրդների մի կեդրոնացումն որոշեալ մի տարածութեան վրայ, այն ժամանակ միջով հակասօցիալիստական գործ էր լինիլ, որ հայ սօցիալիստը փոխանակ իր գործունէութեան ասարեւելք և ատաղձը դարձնելու ամբողջ Թիւրքիան ու նրա ձեռք լուսնադարձ ամբողջ պրոլետարական ոյժերը, աշխատէր միայն Հայաստանի և հայ ժողովրդի համար, ուրիշ խօսքով՝ որ իր սօցիալիստական գործունէութեան ասարեւելք սահմանափակէր Հայաստանով և հայ ժողովրդից յաւաքացած սօցիալիստական տարրերով, ու ընդհանուր միտումն ունենար Հայաստանը զտելու, կտրելու, բաժանելու Թիւրքիայից:

Անջատականութիւնը յայտարար նշան է՞ ազգայնականութեան: Պրոլետարիատի ազատագրական գործը անջատականութիւնը չի՞ դատապարտում: — Կարելի՞ է լինել և՛ անջատական և՛ սօցիալիստ, հնարաւոր է միաժամանակ պրոլետարական ազատագրութեան կողմնակից և պաշտպան լինել ու անջատական լինել:

Առնենք ուրիշ օրինակներ: — Յունաստանը, Սերբիան, Բուլղարիան, Ռումանիան երբեմն Թիւրքիայի կտորներն էին, այդ երկրների ձեռք գործող չէր քաղաքական ոյժերը վերջապէս անջատեցին իրենց երկրները Թուրք պետութիւնից և անկախ դարձին, բայց այդպէս անողները իրենք խոտովանում էին, ինչոր պատմութիւնն արդէն արձանագրել է, որ իրենք սօցիալիստներ չէին: Արդ, էլ ինչո՞ւ կտարբերին նրանցից հայ սօցիալիստները, եթէ նրանք էլ անջատականութեան հետեւին Հայաստանի ձեռք, չէ՞ որ իրենց գործունէութեան հետեւնքն էլ անջատում պիտի լինի. եթէ այդպէս, ապա ո՞ր մնաց սօցիալիզմ և պրոլետարական ազատագրութիւն — հակասութիւն չէ՞ սա, և աւելի նպատակաշարժար չէ՞ր լինիլ պատմական կատարուած փառաք ընդունել յետեւեալ և միացեալ, արդէն եղած երկրի ամբողջութեանը ձեռք գործելու՝ առանց որ և է անջատական միտումի:

Այս բոլորից յետոյ գալիս ենք որոշելու մեր հայեցակէտը, ահա՛ այն. — անջատական քաղաքականութիւնը և նպատակը սօցիալիզմի և պրոլետարական ազատագրութեան հակոռնեան չեն կազմում. նրանք իրարու ոչ միայն բացարձակապէս չեն ջնջում, այլ մին կարող է լինել միւսով, նաչելով ներկայացած պոչմաններին և զեկավարիչ ընդհանուր սկզբունքներին: Այնպէս որ՝ բաղկացուցիչ, տարատեւ (hétérogène) տարրերից բաղկացած մի պետութեան ձեռք մի սօցիալիստ կարող է հետապնդել անջատական նպատակի, ոչ միայն որ և է վնաս չհասցնելով սօցիալիստական պրոլետարական գործին, այլ ընդհակառակը, անջատականութիւնը՝ աւելի լաւ պայման և յարմարաւոր միջոց դարձնելով սօցիալիզմի իրականացմանը: Ինչիւր մի պիտակի և զոյնի մասին չէ, այլ էութեան, ոգուն, արտադրած գործի:

Եզրակացութիւն, եթէ մեր հակառակորդները մի առանձին զուարճութիւն են զգում ձեռք ազգայնականներ (նացիօնալիստներ) որակելով, որովհետեւ մեր գործունէութեան մօտաւոր վախճանակէտի ձեռք անջատում են տեսնում Թուրք բուսականութիւնից, այն ժամանակ բարի պիտի լինին հրապարակ գալ այն թէգով թէ, անջատականութիւն և ազգայնականութիւն (նացիօնալիզմ) հոմանիշներ են և, բացի ազգայնականից, սօցիալիստական գործունէութիւն այնտեղ հող ունենալ չի կարող: — Մեր այս թէգի բացատրութեանը կը վերագրուանք մի փոքր վարը:

Անցնենք մեր օրակարգի երկրորդ խնդրին. — դա ինչ և՛ քաղաքականութիւնն է:

Ինչո՞ւ ԱՎԱՐՈՒԹԻՒՆ, — մեր ձեռք ծառերի նայն խառնիճազանութիւնը կաչ և՛ լնքնավարութեան նկատմամբ:

Ահա՛ մի ընդարձակ պետութիւն, տարատեւ տարրերից բաղկացած. ինչ պիտի լինի մի այդպիսի երկրում Մարքսիստի, կոլեկտիվիստ սօցիալիստի դիրքը, — քաղաքական կեդրոնացման կարելի է համեմատել թէ ձեռք, այլ մի քանի ուղիներով: Կարելի է ստեղծել քաղաքական կեդրոնացուցիչ հաստատութիւններ. բացարձակապետութեան (աբսոլյուտիզմի) ստեղծագործութիւնները օրինակ առնելով, այսինքն հաստատութիւններ, որոնք ամէն իշխանութիւն իրենց ձեռք առնէին և իրանցից ծագեցնէին, ջնջուելով տեղական հակաշէնքի ուրեւ է իշխանութիւն, ամէն ինչ միանմանութեան վերածելով, առանց աչքի առաջ ունենալու թէ այդ պետութեան ձեռք կան տեղական այնպիսի պայմաններ, որ ներքինի չի կարելի փշրել և միատեսակութեան ձեռք դնել այլ տեղերի տարրերի հետ: Անշուշտ կարելի է այդպէս անել, և այդ քաղաքականութիւնը ունեն այն բոլոր սօցիալիստ կուսակցութիւնները, որոնք գործում են միատարրութիւն ներկայացնող ազգերի և պետութիւնների ձեռք, օրինակ Գերմանիա և Ֆրանսիա: Քաղաքական կեդրոնացման այդպիսի հակացողութիւնը իրեն հիմունք ունի տնտեսական աշխարհի ձեռք կատարուած իրականութիւնը: Չէ՞ որ փոքր արտադրութիւնը տեղի է տալիս խոշոր արտադրութեան, փոքր արտադրութիւնը կլանում է մեծից, և այլևս անկարելի է վերահաստատել նախկին օրերի առանձնացումը, երբ ամէն ձեռք արտադրող իր գործիքների տէրն էր, ուրեմն և անկախ միւսներից, և երբ կատարուէր այդ անխուսափելի կեդրոնացումը, ուրեմն այդպիսի անարգան կեդրոնացումն էլ տեղի պիտի ունենայ և՛ քաղաքական աշխարհի ձեռք: Երբ այդպէս, ապա ժամանակակից յառաջադիմութեան հակառակ է փոքրիկ միութիւնների գոյութիւնը տեղական լնքնավարական կենտրոնով: Արդ, երբ պատմական բերմունքների պատճառով որոշեալ մի տարածութեան ձեռք ստեղծւել է մի կառույն, մի մնացույն դրութիւն, երբ այդ փոքրիկ միութիւնների ջնջուելով կազմուել է մի ընդհանուր պետական միութիւն, որի բաղկացուցիչ մասն են կազմում այժմս նախկին քաղաքական գոյացութիւնները, — այլևս յետ դառնալ՝ կնշանակի առաջուան քաղաքական միութիւնների վերականգնութիւնը, լինի լնքնավարական ձեռք տակ իսկ. այլ քաղաքական այնպիսի հաստատութիւններ պիտի ստեղծել, որ նրանց անհատական գոյութիւնը ճահայնելը իրեն անմիջական նպատակ ունենար, ու կատարուած իրողութիւնը իբրև հիմունք ընդունելով՝ սօցիալիստական գործունէութիւն հաստատել ամբողջութեան ձեռք, մի գործունէութիւն՝ որ պիտի արտայայտուի իր արտադրիչ կուսակցութիւնով, և այդ ձեռք շարունակ-միտել, երթալ դէպի կեդրոնացում, — ծայրայեղ կեդրոնացումն, առանց որ և է պատուարի, ահա՛ ծոածմունքի ուղն ու ծուծը այդ թէգը պաշտպանողներին:

Դրա հակառակն էլ կայ: Կան սօցիալիստներ, որոնք՝ դարձեալ Մարքսիստական հողի վրայ կանգնելով, քաղաքական կեդրոնացումը դարձեալ իրենց վերջին նպատակ ունենալով՝ հենց սօցիալիզմի և պրոլետարական ազատագրական շահի տեսակետից պնդում, փաստում են և այն անդրդուելի համոզման են յանգած, որ տարասեռ տարրեր՝ բովանդակող պետութիւններն ձեռք քաղաքական ընդարձակ և լիակատար ինքնավարութիւնների միջոցով է, որ կարելի պիտի լինի հասնել քաղաքական կեդրոնացման այն վերջակետին, որ համապատասխան է պրոլետարիատի շահերին և սօցիալիստական սկզբունքներին: Այսինքն ունենալ քաղաքական այնպիսի հաստատութիւններ (ընդհանուր պարլամենտ) որ միացուցիչ կեդրոնը լինէին ամբողջ պետութեան, բայց դրա հետ միասին ունենալ և՛ տեղական, քաղաքական ինքնավարութիւններ, ու այս վերջինները միջոց ընդունելով՝ իրագործել ընդհանուր կեդրոնացումը: Ուրեմն երկու պարագայումն էլ կեդրոնացումը նպատակ և միանգամայն միջոց է սօցիալիզմի իրագործմանը հասնելուն, մին առանց տեղական ինքնավարական սկզբունքների, ջնջելով տեղական ամէն պայման, նոյն խի անվերածելի համարուող, ամէն ինչ հարթ հաւասար դարձնելով՝ միայն կեդրոնացման նպատակին հասնելու համար: Խի միւսը՝ առանց հակառակելու ընդհանուր կեդրոնացման, աշխատում է այդ կեդրոնացումը կազմակերպել, ինքնավարական սիստէմի մէջտեղով:

Խնդիրը, իսկապէս, երկու սիստէմի մասին է, որ բոլորում է իրականութեան տարբեր բնութեանից, հետեւաբար ո՛չ առաջին սիստէմի պաշտպան եղողը իրեն կարող է ուղղափառ սօցիալիստ համարել և ո՛չ էլ երկրորդը: Դէպք միւսին ազգայնական նշույթի տարափով չէ որ պիտի համոզի, այլ փաստերով, իրականութեան բացատրութեամբ:

Արդ, մեր թէզն է, թէ ներկայումս կան բազմապիսի պետութիւններ՝ որոնց ձեռք, սօցիալիստական և պրոլետարական ազատագրութեան գործի տեսակետից, քաղաքական ինքնավարական սիստէմի գործադրութիւնը ո՛չ միայն ցանկալի, այլ բացարձակ անհրաժեշտութիւն է քաղաքական ընդհանուր կեդրոնացմանը հասնելու համար: Նա յարմարագոյն և ազգու ձևն է, որով կարելի է կեդրոնացման ընդհանուր ներգաշնակութիւնը հաստատել:

Եթէ կան մտածողներ, սօցիալիստներ, որոնք կարծում են թէ բազմապիսի պետութիւնների վրայ միշտ պիտի նայել, որպէս անբաղկացուցիչ և միասեռ պետութիւնների, ու քաղաքական ինքնավարական սիստէմի գործադրութիւնը միշտ կլնաւի սօցիալիզմին և պրոլետարական ազատագրութեանը ու այդ մտածումը առաջնորդող և հետեւանք է ազգայնականութեան (նացիօնալիզմի), — այն ժամանակ մեզ շատ պիտի հետաքրքրէին իրենց ներկայացրած փաստերը և այդ փաստերից բխող բացատրութիւնները: Մենք մեր դիրքի վրան ենք:

ԱՆԿԱՅՈՒԹԻՒՆ, — Դանք մեր օրակարգի երրորդ խնդրին, — անկախութեան: Կայ մի ընդարձակ պետութիւն, տաբանեռ ժողովրդներից բաղկացած, այդտեղ գործում է մի կուսակցութիւն, սօցիալիստ կուսակցութիւն, նա որպէս սօցիալիստ, սօցիալիստական սկզբունքների գործադրութեան շարժառիթից մղուած, ուղղւած է այդ ժողովուրդը բաժանել պետութեան ձեռք բովանդակուած միւս ժողովրդներից և նրա երկրը, հայրենիքը կտրել, դատել ընդհանուր պետութիւնից: Նա չի ուղղւած գործել ամբողջ պետութեան ձեռք, այլ նրա մի մասի, նա այդ պետութեան բազմապիսի բոլոր ժողովուրդները չունի իրեն թափառեմ, այլ նրա մի մասը միայն: Հակասում է սա սօցիալիստական սկզբունքին և պրոլետարական ազատագրութեան գործին: Կան մտածողներ, և մենք այդ կարգից ենք, որ՝ ո՛չ:

Անշուշտ մտածողներ էլ կլինեն, թէ ինչո՞ւ բազմապիսի ամբողջութիւնը չպէտք է աշխատել վերակազմել և սօցիալիստական սկզբունքների կիրարկութեան վայր դարձնել, ինչո՞ւ միայն մի ժողովրդի ձեռք սահմանափակել իր գործունեութիւնը և ո՛չ բոլոր ժողովրդներին: Անշուշտ այդպէս էլ կարելի է մտածել: — Բայց երբ այդպիսի պարագայում գալիս են երկու մտածողներ, որոնք ո՛չ թէ սկզբունքով իրարու խաչաձևում են, այլ միայն գործունեութեան վայրերի տարբերութեամբ են իրարուց զանազանում, այն ժամանակ վերջին խօսքը որին լինելը աւելի որոշ կերպով հՀասկացուի, երբ կրկին փաստերը և մէջտեղ կզան շարժառիթները: Ի՞նչե՞նք մի ազգի անկախութեան կողմնակից, պաշտպան նրա անջատմանը պետութեան միւս մասերից, միւս ժողովրդներից, — դրանից անպատճառ չի բխում թէ այդ արարքի հեղինակները անպայման ազգայնականներ (նացիօնալիստներ) են և իրենց արարքն էլ ազգայնականութիւն: Ինչպէս որ չբաժանման, ոչ անկախութեան կողմնակիցներն էլ իրենց չեն կարող անպատճառ նկատել տալ սօցիալիստներ, և նրանց արարքի աստուծի տակը կարելի չլինի գտնել ազգայնականութիւն:

Անկախութիւն և ազգայնականութիւն՝ դրանք համապարկաբար չեն՝ յաճենայն դէպք, մին միւսով անպատճառ չի պայմանաւորւում, մէկը միւսի բացարձակ յայտարար նշանը չէ: Անկախութեան կողմնակցութիւնը սօցիալիզմի և պրոլետարական ազատագրութեան բացասութիւն չէ միշտ և ամէն տեղ — դա մեր թէզն է եղած և է:

Բացատրութեան անցնելուց առաջ մի դիտողութիւն էլ: Ազգ(nation), ազգայնութիւն(nationalité), ազգայնականութիւն(nationalisme), — դրանք համազօր և հոմանիշ բառեր չեն: Դիտեալ պէտք է և՛ այն, որ սօցիալիզմը չի բացասում մի ժողովրդի ազգային իրաւունքները և նրա ազգային գոյութեան անհատականութիւնը, — ո՛չ միայն նա այդ չի բացասում, այլ միացնում, կատարելագործում և իր բախտը իրեն է յանձնում:

Այժմ վեր առնենք առաջին խնդիրը. — ան ջ ա տ ա կ ա ն ու թ իւ ն ք:

Մարդկային ազգի զարգացման ընթացքում շատ որոշ է այն իրողութիւնը, որ յաճախ ժողովուրդները իրենք չեն եղել իրենց բախտի տնօրինողը՝ քաղաքական այս և այն խմբակցութեան պատկանելու կամ չպատկանելու նկատմամբ: Նրանց յաճախ տիրապետութեան, նուաճումի լուծին են ենթարկել և ստիպել, հարկադրել, հակառակ իրենց կամքին և շահին, այս և այն խմբակցութեան մասը կազմել: Ուրեմն, երբ խնդիրը գալիս է անջատականութեան, որպէս մի գաղափարի, այդտեղ զատապարտելի ոչինչ կարող է լինել, աչքի առաջ ունենալով անցեալում գործող ոյժերը և ժողովրդի ընդհանուր կամքը, շահը: Քանի որ մի ժողովուրդ իր անբռնաբարելի կամքով և ցանկութեամբ չի միացել մի խմբակցութեան, քաղաքական մի կազմակերպութեան հետ, և կատարուածը եղել է հակառակ իր կամքին, ասել է թէ նա միշտ իրեն համար վերապահւած մի իրաւունք ունի, այն է՝ բաժանուել, զատուել այն միութիւնից, որի մասն էին արել իրեն պատմական նախկին ոյժերը: զատուելու, բաժանուելու, անջատուելու իրաւունքը կայ, նա անբաժան է, և երբ գալիս է իր գործադրութեան, իրականացման րոպէն, այդտեղ՝ ոչ ոք չի կարող զատապարտութեան խօսք գլորել, եթէ նա բռնապետ, ժողովրդական իրաւունք չը ճանչցող, բռնադատող մէկը չէ: Եւ եթէ մի ժողովուրդ, պատմութեան ընթացքում, ինքն իր սեպհական կամքով է միացել մի պետութեան, քաղաքական մի այլ կազմակերպութեան հետ, կնշանակի թէ նա գործել է իր միահեծան կամքով: Արդ, երբ ներկայանում է պատմական մի այլ րոպէ, ու ինքը ցանկանում է թողնել իր առաջուան

կացութիւնը և իրեն համար նոր դրութիւն ստեղծել՝ բաժանուելով, անջատուելով նախկին կազմակերպութիւնից, — այդտեղ դարձեալ դատապարտելի ոչինչ կարող է լինել:

Անջատականութիւնը ինքն ըստ ինքեան դատապարտողները՝ պէտք է նախ դատապարտեն և չճանաչեն ժողովրդական ճիշդեմանութեան իրաւունքը. — իսկ այդպէս ժողովրդները ո՛չ ճիշդ սօցիալիստներ չեն կարող լինել, այլ հասարակ ազատամիտներ: Այսօր ո՛չ ճի ազատամիտ հրապարակասօս չկայ, որ ժողովրդների ճիշդեման կամքի տեսութիւնը չընդունի:

Արդ, լինել սօցիալիստ, անպատճառ ասել չէ անջատական ոգուն հակառակ լինել, և ո՛չ էլ անջատական ոգին պաշտպանելը ասել չէ անպայման ազգայնական լինել: Դա դաժանութիւնի շփոթութիւն է՝ անջատականութիւնը և ազգայնականութիւնը համարժէք նկատելը, ինչպէս և սխալ՝ սօցիալիզմը և ոչ-անջատականութիւնը համարելը:

Իսկապէս այդտեղ հետաքրքրող, փնտռելիք կէտն այն է թէ արդեօք անջատականութիւնը կարող է լինել. համապատասխան, ցանկալի է նա սօցիալիզմի գործադրութեան և պրոլետարական ազատագրութեան գործի տեսակէտից: Եթէ անջատականութիւնը քննա չի բերիլ սօցիալիզմի կիրարկութեանը, նրա գործադրութեանը խռթ և խոչնդոտ չի դառնալ, եթէ պրոլետարական ազատագրութիւնը այդտեղից չի հարուածուիլ, յապաղման չի ենթարկուիլ — այն ժամանակ ինչո՞ւ այդպիսի ճի սկզբունք չը պաշտպանել, քանի որ իրական հող կայ և պաշտպանելը ինչո՞ւ յանցանք պիտի լինի:

Անջատականութեան մասին խօսած ժամանակ երբեք չպիտի յենուել ճիշդ բնագիտական արդարութիւն, իրաւունք, ազատութիւն, ճարտարութիւն բառերի վրան: Արդարութիւն, իրաւունք, ազատութիւն, ճարտարութիւն դրանք՝ «դադարի» բառեր են և այդպէս էլ կմնան, մինչև որ գործադրութեան պայմաններ, ճարմին տուող հանգամանքներ չլինեն: Եւ խնդիրը հէ՛նց այդ պայմանների, հէ՛նց այդ հանգամանքների մասին է: Կա՞ն ազգակներ, որոնցմով կարելի լինի իրադրծել այն անջատականութիւնը, որ իր հետ պիտի բերի իրաւունքի, արդարութեան, ազատութեան, հաւասարութեան գործադրութիւնը, — եթէ կան՝ պիտի աշխատել, իսկ եթէ չկան՝ ո՛չ աշխատանքը նշանակութիւն կունենայ և ո՛չ էլ բանաձևերը: Ուրեմն խնդիրը պայմանների կայի ու չկայի, հնարաւորութեան, լինել և չլինելու մասին է, և ո՛չ թէ սօցիալիզմի կամ հակասօցիալիզմի: Մի սօցիալիստ ազատ է պաշտպանելու անջատականութիւնը կամ ոչ, ձգտել նրա յառաջանալուն, կամ հակառակել, միշտ պատասխանատու մնալով իրականութեան, այն՝ թէ ո՛րքան նա կարողացել է թափանցել արդէն եղած պայմանների մէջ և նրանց ո՛րքան նպատակայարմար է դաել սօցիալիզմի իրականացմանը:

Այդ նկատմամբ յիշեցնենք պատմական մի եղելութիւն:

Երբ Բակունինը իր յայտնի «Կոչ» ու պաւոն ժողովրդների դատուն սկսեց պաշտպանել՝ յենուելով «արդարութեան», «ճարտարութեան» և «ազատութեան» վրայ. Մարքսը, «Դեմոկրատիքական Պանսլավիզմ» յօդուածով (1849-ին), փաստեց այն նախապայմանը, որ անջատուելու, ազատուելու, անկախ դառնալու համար «վերացական գաղափարները» դեռ հերիք չեն, քաղաքական կերպարանափոխութիւններ, նոր խմբակցութիւններ, անջատումներ կամ միացումներ չեն կարող տեղի ունենալ, լոկ ցանկութեան և բնագիտական մտքերի փաստաբանութեամբ, այլ դրա համար պէտք է իրական հող, ստեղծիչ պայմաններ, արտադրող ազգակներ: Եթէ մուցիւն գործններ չկան, մի նոր իրողութիւն չի կարող առաջ գալ, ինչքան էլ որ բնագիտական իրաւական, արդարութեան, ճշմարտութեան և ճարտարութեան գաղափարները այդ պահանջն և ցանկալի համարեն: Անշուշտ՝ այդ դատողութեամբ չի ժխտուած

իրաւունքը ըստ ինքեան, բայց ինչպիսի է թէ իրաւունքը իրականանալու, ճարմին առնելու համար պայմաններ կա՞ն թէ ո՛չ: Եթէ կան, ապա նա կլինի, կիրականանայ, ինչ խոչնդոտի էլ որ պատահելու լինի, իսկ թէ չկան, նա չի լինիլ, չի ճարմնանալ, ինչքան էլ որ ճարտարամիտ փաստաբաններ ունենան:

Նուաճման իրողութիւնը ինքնին, որպէս պատմական մի անարդարութիւն ընդէմ նուաճուող ժողովրդի իրաւունքի, դեռ հերիք չէ, որպէսզի մի ժողովրդի անջատուելը, դատուելը, ազատուելը փաստաբանուէր և որպէս պահանջ՝ դրուէր, այլ դրա հետ հարկաւոր էր ներկայացնել և՛ այն իրողութիւնը, որ նուաճուող ժողովուրդը այդ անջատականութիւնը ցանկանում է, ունի պայմաններ իրագործելու, և թէ դա նպատակայարմար է ընդհանուր սօցիալիզմի և պրոլետարական ազատագրութեան տեսակէտից: Ահա այդ փաստաբանութեամբ էր որ Մարքսը, թիւս այսոց, արդարացնում էր նուաճման իրողութիւնը Տեխասի և Կալիֆօրնիայի նկատմամբ, որովհետև այդ տեղերի ժողովուրդները ո՛չ ճիշդ ցանկացել էին անջատուել Մեքսիկայի հասարակապետութիւնից, այլ ունեցել էին միջոց այդ պայմանը — Ամերիկայի Միացեալ Նահանգների միջոցով — այդ ցանկութիւնը գործադրելու: Անշուշտ այդ կերպով Մարքսը չէր պաշտպանում քաղաքական աճէն նուաճում, որովհետև այդպիսի նուաճումների դէմ Մարքսից աւելի բողոքող և կռուող չի եղել, այլ այն՝ թէ մերկ գաղափարը բաւական չէ, էսականը՝ գաղափարը մարմնացնող պայմաններն են, որոնց գոյութիւնը ամէնից առաջ պէտք է տեսնել և շօշափել:

Աւելորդ համարելով մեր խօսքը այդ մասին երկարացնելու, — նորագոյն ժամանակի մէջ կատարուած անջատումները առաջ բերելով — անցնենք Հայաստան:

Մեր դիրքը այստեղ որոշ է, մթին ոչինչ չկայ: — Այն օրից՝ որ մենք ոտք ենք կոխել թրքահայ իրականութեան մէջ, առաջին օրից իսկ մենք պաշտպանել ենք հայ ժողովրդի, հայ հայրենիքի անջատուելու գաղափարը թիւրք բռնապետութիւնից: Ուղի՞ք ենք հասկացել թրքահայ իրականութիւնը և թուրք բռնապետութեան վիճակը, թէ՞ ոչ, — այդ մասին կարելի է վիճել. կայ՞ն, կա՞ն պայմաններ այդ անջատականութիւնը առաջ բերելու, ճարմնացնելու, — այդ նկատմամբ անհամաձայնութիւններ կարող են լինել, և եղած են վաղուց անտի, բայց այդ մտքի պաշտպանութիւնից եղբակացը՝ նելը, այդ իրողութիւնից հետևեցնել թէ մենք, ուրեմն, ազգայնականներ ենք, ազգայնականներ ենք, որովհետև անջատականութիւնը ենք — դա աւելի քան հեղինակութիւն է դէպի սօցիալիստական սկզբունքները: Խնդիրը, վէճը պիտի դառնայ միայն նրա շուրջը, թէ արդեօք հնարաւոր է, կարելի է և սօցիալիզմի ու պրոլետարական ազատագրութեան տեսակէտից ցանկալի է այդ անջատումը առաջ բերել: Ահա՛՛ կէտը, որ պէտք է լուսաբանել, որի մասին կարելի է հակաճառել: Եւ որովհետև մենք համոզուած ենք որ այդ անջատումը իրականանալու աւելի մեծ պայմաններ կան, քան ամբողջ թիւրքի մեր վերածննդները՝ ժողովրդական հիմունքներով. — ուստի այդ գծի վրան ենք կանգնած: Մենք համոզուած ենք որ Միջազգայնականը և ընդհանուր Սօցիալ-Դեմոկրատիան մեծապէս կշահի, եթէ թրքահայ ժողովրդի բախտը անջատու Օսմանեան Բռնապետութիւնից: Կարող են լինել ճարդիկ, սօցիալիստներ, որոնք մեր այդ համոզմանը կողմնակից չգրտունուեն և հակառակը փաստեն, բայց դրանով չի կարելի հաստատել թէ մենք այդպէս ցանկանում ենք, այդ ուղղութեամբ աշխատում ենք, որովհետև ազգայնականներ ենք: Սօցիալիզմը, սօցիալիստական թէօրիան, պրոլետարական ազատագրութեան գործը մեզ արգելք չի դնում այդ ուղղութեամբ աշխատելու: Հետևաբար մենք նոյնքան սօցիալիստ

ներ ենք, որքան և այն սօցիալիստները (Ֆրանսիայի, Գերմանիայի), որոնք անջատման ուղղակի դործ չունեն իրենց ուսերի վրան:

Խնդրի այդ մասը միայն պարզաբանելու համար, առնենք անմիջապես անկախութեան խնդիրը:

Նա՞ որ պաշտպանում է «ազատ», «անկախ Հայաստան»-ի գաղափարը, — ազգայնական է, ասում է. «ազատ», «անկախ Հայաստան» և հակասօցիալիզմ, ազգայնականություն (նացիոնալիզմ)՝ դրանք համարվե՞ք գաղափարներ են նկատուած մեր հակառակաօսների կողմից:

Բայց մեր այդ հակառակաօսները իրենք իրենց հետևողական մնալու համար պիտի պնդէին, որ Կարլ Մարքսն էլ «ազգայնական» և «նացիոնալիստ» է եղել, որովհետև պաշտպանել է Գերմանիոյ միութենական շարժումները, Իտալիայի, Հունգարիայի և Լեհաստանի անկախութիւնը: — Իտալիայի մի շատ խոշոր մասը մարմնացած էր Աւստրիայի մէջ, Հունգարիան ամբողջապէս թաղուած էր Աւստրիական կայսրութեան մէջ. Հարաւային Գերմանիան Աւստրիական մի նահանգ էր — միթէ Մարքսը չը հակասեց «քաղաքական կեդրոնացման» սխառեմին, որ այդ երկրների անկախութիւնը՝ Աւստրիայից և անջատումը՝ Ռուսիայից փաստեց: Մեր հակառակորդները այստեղ Մարքսից աւելի Մարքսիստ լինել պիտի փաստէին: — Քաղաքական կեդրոնացման կողմնակից Մարքսը, սակայն, երբեք ինքն իրեն չի հակասել այդ երկրների անկախութեան և անջատման կողմնակից լինելուն համար. նա տուել է իր պատճառաբանութիւնը, ինչպէս և նոյն այդ պատճառաբանութեամբ էլ փաստել է պլանն մանր ազգութիւնների ոչ-անջատուելու կարևորութիւնը և ֆաստակարութիւնը (ընդհանուր քաղաքակրթութեան տեսակէտից) նոյն այդ Աւստրիայից:

Պարզ է, ուրեմն, որ խնդիրը պիտի դառնայ նրա շուրջը թէ արդեօք հնարաւորութիւն կա՞յ «ազատ», «անկախ Հայաստանի» գաղափարի իրագործմանը, և թէ այդ իրագործումը օգտաւէտ, նպատակայարմար է Միջազգայնականի և պրոլետարական ազատագրութեան տեսակէտից:

Խօսքը տանք Կ. Կառուցիկուն:

«Բայց անհատը, ինչպէս և ազգը, միշտ պէտք է ստորագրատեն միջազգային պրոլետարիատի ազատագրական կռուին, և այնտեղ՝ ուր նրանց մասնաւոր շահերը հակադիր են այդ կռուի պահանջներին, — անհատական կամ ազգայնական շահը, ինչպէս մասնաւոր ամէն շահ, օրինակի համար մի արհեստի կամ մի համքարութեան շահը, — պէտք է երկրորդական կարգին անցնեն»:

«Ազգայնականը» (նացիոնալիստ), կապիտալիստական մեծատէնութեամբ, կարող է յայտարարել right or wrong, my country, եւ իմ հայրենիքիս կողմն եմ, լինի նա ուղիղ կամ սխալ. սօցիալիստը բաւականաչափ իմացականութիւն և սիրտ պիտի ունենայ ճանաչելու համար՝ թէ երբ իր ազգի շահը հակադիր է պրոլետարիատի ազատագրութեանը, ըստ այնմ էլ պիտի վարուի: Այսպիսով է որ պիտի բացատրել Մարքսի և Էնգելսի. հակառակութիւնը դէպի Աւստրիայի և Թիւրքիայի Սլաւ (ի բաց առեալ լեհերը) ազգերի ձգտումները, որովհետև նրանք հաւատացած էին, որ պրոլետարիատի ամենասոսկալի թշնամին՝ ցարիզմը այդտեղից կօզորւէր: Միևնոյն կերպով է, որ պէտք է բացատրել նրանց որոշումը — և գերմանական ամբողջ Սօցիալ-Դեմոկրատիայի որոշումը — իրենց սեպհական ազգի նացիոնալիզմին ընդդէմադրելու՝ Փրանկո-գերմանական պատերազմի ատեն, այդ այն նկատումով՝ որ պատերազմը կարող էր ծառայել միայն Հոհենցոլլերներին և ցարիզմին, և ուրեմն նա ֆաստակար էր դեմոկրատիային, թէ Գերմանիայում թէ և Փրանսիայում»:

Այդ տեսակէտով էլ, բոլոր սօցիալիստների մէջ, Լիբլենիստը

* la Vie Socialiste, No 17

հակառակեց թրքահայ շարժումներին, ենթադրելով որ այդ շարժումները հետևանք են ցարիզմի խարդաւանքներին կամ կարող են ծառայել միայն նրա շահերին: Ինչոր սխալ դուրս եկաւ:

Եթէ մենք right or wrong (ուղիղ կամ սխալ) Հայաստանի ազատութիւնը և անկախութիւնը պահանջէինք, միայն նրա համար, որովհետև նա մեր country-ն (երկիրն) էր եղած — դա, արդարեւ, կլինէր նացիոնալիզմ: Մենք Հայաստանի ազատութիւնը և անկախութիւնը միջոց ենք նկատել այդ երկրի ժամանակակից քաղաքակրթութեան կարգերով յառաջացմանը ու սօցիալիստական սկզբունքների իրականացման համար, և այդ ոչ թէ միայն հայի, այլ Հայաստանի տաճարութեան վրայ բոլոր ժողովրդների համար անխափար: Սօցիալիզմ և անկախութիւն՝ դրանք համընթաց են եղել մեր պրօպագանդի մէջ, մին միւսից չի դատուել, մին միւսով է պայմանաւորուել:

Մենք չենք ասել թէ կռոււմ ենք միայն՝ որ հայի համար ինչքի, գոյքի և կեանքի ապահովութիւն ձեռք բերենք: Մենք նկատել ենք որ հայի ինչքն էլ, կեանքն էլ, ապահով է պայմանով որ նա աշխատանքի դրութեան մէջ մնայ: — Ռուսականութիւնը խորտակել Հայաստանից և այնտեղ հաստատել, ազատ քաղաքացիութիւն, — ահա մեր հետապնդածը:

Մի ժողովուրդ չի ազատագրուած, երբ նա լծի անունը և տեսակն է փոխուած. լուծը լուծ է, ո՛վ էլ որ լինի դնողը: Մի ժողովուրդ իրական տէր է իր բախտին միայն այն ժամանակ, երբ արտագրութեան գործիքները իր սեպհականութիւնը կը դառնան, երբ աշխատանքի միահեծանութիւնը տիրապետող կլինի, իսկ աշխատանքի միահեծանութիւնը, արտագրութեան միջոցների ընկերականացումն՝ սրանք կլինեն միայն ժամանակ, երբ ժողովուրդը նախ կը ձգտի բերել քաղաքական միահեծանութիւն, իսկ այդ ունենալու համար, — կազմակերպութիւն, կռիւ, ներկայացուած պահանջների և պայմանների համաձայն:

Այստեղ պատմական մի կէտ կարող ենք վեր հանել՝ — Լիբլենիստի յօդուածը՝ թրքահայ շարժումների դէմ՝ իր ազդեցութիւնն էր թողել, կարող ենք ասել, ամբողջ սօցիալիստական աշխարհի վրան: Ժօրէսը իսկ la Petite république-ի մէջ, Արևելեան Խնդրի վրայ խօսող իր մէկ յօդուածով, աննպաստ դիրք բռնեց սկզբում. երբ մի անգամ ծանօթացաւ մեր սկզբունքների հետ — և հայ ժողովրդի ողին, պատմութիւնը լաւ ճանաչելու համար յայտնի հոգեւորը ուղեց հայ պատմագիրներ և ստացաւ Langlois-ի երկհատորը — այնուհետև նա առաջին զօրավիզը եղաւ Հայկական Դատին և, Սասունի 1894-ի կռուի առթիւ, մի հարցապնդումի ժամանակ, արտասանեց իր այն հրաշալի ճառը, որ սօցիալիստական պատմութեան մէջ իր փառաւոր տեղը կունենայ:

Կառուցիկն հայ ժողովրդի նոյն իսկ անկախութիւնը ցանկացողներից է եղել, և մի սօցիալիստ չկայ, եւրոպայում, որ Հայկական Դատ և նացիոնալիզմ նոյնութիւն համարէ ու մեզ մեղադրէին նացիոնալիզմի մէջ, որովհետև ամբողջ Թիւրքիան և նրա վերածնութիւնը մեր սօցիալիստական գործունէութեան ասպարէզը և նպատակակէտը չենք դարձրել: Բոլորն էլ պիտեն որ այդ շարժման տակ, մեր ծրագրով, նոյն այն խնդիրներն են, ինչոր իրենց երկրում, բնականաբար մեր ունեցած առանձնայատուկ պայմաններով:

Արդ, մեր հակառակաօսներին կմնայ ապացուցանել թէ Հայկական Դատը և այդ Դատի մեր ըմբռնումը իրօք հակառակ են և ֆաստակար սօցիալիզմին ու պրոլետարական ազատագրութեան գործին:

Թէ ինչո՞ւ մենք Հայաստանի անկախութիւնն ենք զրած և ոչ թէ ընդհանուր Թիւրքիայի վերանորոգութեան գործը — այդ հարցին մենք արդէն պատասխանել ենք, գուցէ նորից

վերագրումանք: Պատճառները միայն մի բանից յիշենք, — այն՝ որ մենք կարելիութիւն չենք տեսել ընդհանուր Թիւրքիան վերածնենելու, նորագոյն պետութիւն դարձնելու: Ուրովհետեւ այդպիսի մի ընդհանուր ձգտում չենք նկատում Թիւրքիայի մէջ բովանդակուած բոլոր ժողովրդները կողմից: Ուրովհետեւ Թիւրքիայի մէջ եղող դժգոհ ժողովուրդները շաւրունակ, բոլորն էլ, ձգտել են բաժանուել Թիւրքիայից և իրենց ազատութիւնը վերստանալ ինքնավարութեամբ և անկախութեամբ:

Որովհետեւ Թիւրքիայի գոյութեան և ոչ գոյութեան խնդիրը հրապարակ դրուած օրից, — իսկական Արեւելեան Խնդրի ըսկըսում օրից — նրա բախտը որոշուել է անդամատումով, այսինքն բաժանման (պետութեանց միջև), ինքնավարութեան և անկախութեան (բաղկացուցիչ ազգերի միջև) եղանակով:

Որովհետեւ Թիւրքիայի ճակատագրի իսկական տեղը եղող պետութիւնները թէ հաւաքաբար և թէ անհատաբար հակառակ են ընդհանուր Թիւրքիայի վերածնութեան և նորագոյնացման գաղափարին: Որովհետեւ նորագոյն պետութիւն դառնալու համար տարբեր չլինելուց զատ, դրա համար պահանջած մտաւոր և ֆինանսական կարողութիւնը չունի Թիւրք պետութիւնը:

Որովհետեւ այդ պետութեան ղեկավարիչ դասակարգերի բացարձակ նշանաբանն է եղել կա՛մ բացարձակ բռնապետութիւն՝ խղամական թէօկրատիայով, կա՛մ ջրհեղեղ:

Որովհետեւ պետութիւն վերածնենելու, նորագոյնացնելու իսկական տարր՝ Թուրք մասնա չկայ, գոյութիւն չունի, պահանջուած, համապատասխան չափով: Որովհետեւ այդ ընդարձակ պետութեան մէջ այլասեռ տարրերը իրարու բոլորովին խորթ, օտար են. նրանց իրար կապող հոգեկան և նիւթական ընդհանուր, տեսական կապեր չեն եղել և չկան: Որովհետեւ պատմութեան ընթացքում Թուրք տիրապետող տարրը անընդունակ է եղել քաղաքացիական ձգտումներով և շահերով իրարու հետ շաղկապել Արաբիա, Հայաստան, Մակեդոնիա, Սիրիա, Ալբանիա... որոնք բոլորն էլ ապրել են իրենց սեպհական և ուրոյն կեանքովը և տիրապետողի ոտքը այդ երկրներից կտրուած օրից իսկ՝ այն տեղերն նրա հետքն անգամ չի մնալ, և այլն, և այլն:

Այդ պայմանները աչքի առաջ ունենալով՝ մենք գտած ենք մեր ճիգերին աւելի համապատասխան, աւելի հնարաւոր և սոցիալիզմի ու պրոլետարական ազատագրութեան գործին աւելի օգտուէտ Հայաստանի անկախութիւնը և անջատումը, միշտ քարոզելով՝ որ այդ անկախութիւնից, այդ անջատումից այնքան պիտի օգտուէր Հայ աշխատաւորը, Հայ գիւղացին, Հայ պրոլետարը, Հայ սեպհականազորը, որքան որ Հայաստանի մէջ ապրող Թուրքը, քիւրդը, ասորին... և այլն, այդ տեսակետով է որ այս վերջինների համերաշխութիւնն ու գործակցութիւնն ենք ուզած — իսկ թէ մենք ինչո՞ւ մեր ցանկութիւնների իրագործմանը չենք կարողացել հասնել, — դա այդ րոպէիս յորուցում խնդրի հետ կապ չունի:

Արդ, երբ Հայաստանի անկախութեան հարցը մենք կապել ենք սոցիալիզմի և սօցիալիստական կապի հարցի հետ — այդտեղ մենք չենք, որ նացիօնալիստներ պիտի նկատուենք:

Եւ այսօր ինչո՞ւ են մեզ փախում Հայկական Դատը Թողնելու սովորականութիւնը. — Արեւելեան Խնդրի լուծմամբ շահագրգռուած պետութիւնների քաղաքականութեամբ, բայց այդ բոլորը շատ տարիներ առաջ մեր գիտողութիւններն զխօսքերն են: Եւ այդտեղ մեր հակառակաօսները մոռնում են մի գլխաւոր հանգամանք, այն թէ՛ երբ այս կա՛մ այն պետութեան չուզողաց դիրքն են ճառանալիշում դէպի «անկախ», «ազատ» կա՛մ «ինքնավար Հայաստան», նրանք մոռնում են փաստելու և այն, թէ արդեօք նրանք ուզո՞ւմ են վերածնուած,

նորագոյնացած Թիւրքիա, և այն՝ թէ նրանք ո՞րը կը նախընտրէին, — ազատ, անկախ, ինքնավար Հայաստան, թէ՛ նորագոյնացած Թիւրքիա:

Մարդիկ, որոնք դեռ մինչև երէկ բնութագրական Ռուսիայի դրօշակն էին շեփորում Հայաստանի ու Հայ ժողովրդի ազատութեանը սրպէս դրաւական, ու մենք է՛ն առաջինը եղանք Հայ պատմութեան մէջ, որ ուսուստաբն քաղաքականութեան լարերը հրապարակ դրեցինք և նրա մեր հարցի դէմ ունեցած հակամարտութիւնը մատնանիշեցինք, փաստեցինք — այսօր մեր ասածները վերակրկնում են, բայց ի՛նչ նպատակի համար, — Թաղել Հայկական Դատը և արծարծել ընդհանուր Թիւրքիայի խնդիր. բայց մոռնում են որ ուսուս բնութագրական այս վերջին եղբակցութեան հետ հաշտուիլ քաղաքականապէս անկարող է: Ինչո՞ւ ուրեմն չեն յիշում, որ մենք այս էլ ասած ենք և մեզ արեւ դարացնող փաստերը այնտեղ հեռու: — Երեւակայում ենք, որ այլեւ ձեռքերը ծալած նստել և մաճկատաւանի կամ մաճկաՀայի ազատագրութիւնը «Սահմանադրական Ռուսիայից» ըստ պատելու պրոյէկտները արդէն ցրտած են:

Երբ Հայկական Դատը Թողնելու փաստողները ցոյց են տալիս թէ Անգղիան, Իտալիան, Ֆրանսիան, Աւստրո-Հունգարիան, Գերմանիան չեն օգնիլ ազատ Հայաստան ստեղծելուն, ապա նրանք կօգնե՞ն նորագոյն Թիւրքիա ստեղծելուն — չէ՞ որ երեք հարիւր տարուայ պատմութիւն կայ այնտեղ:

Մենք ենք Հայկական Դատի լուծուելու կարելիութիւնը յուսացելով եւրոպական պետութիւններից, մենք ենք քարոզել յոյս դնել մեծ պետութիւնների մարդասիրական զգացումների և քրիտոնէական համակրութիւնների վրան, — մենք ո՛չ միայն այդ չենք ասել, այլ այդպէս մտածողների դէմ կանոնաւոր պայքար ենք մղել: Հայկական Դատի լուծումը Հայ ժողովրդի ճիշդը պիտի լինի. իսկ այդ ճիշդ պիտի արտայայտուի պարագաներին և գործի պահանջին համեմատ տարտիկալով: Եւրոպական պետութեանց միջամտութիւնը, մենք ասել ենք, որ կարող է գալ միայն որպէս հետեանք մեր գործունէութեան, որ միջամտութիւնը հարկեցուցիչ դարձնողը միայն այդ պետութիւնները շահը կարող է լինել, — այդ չի՞ ասել և Արեւելեան Խնդրի պատմութիւնը: Այն էլ ասե՛նք որ 1896-ից ի վեր մենք շարունակ փաստել, մատնանիշել ենք մանր ցոյցերի և պարտիզանական կռիւների աննպատակալարմարութիւնը Հայկական Դատի լուծման տեսակետով, ինչպէս և ղիւանագիտական անօգուտ ջանքերը, ղիւանագէտներից, որպէս անձնաւորութիւններից, սպասուած արդիւնքների ունայնութիւնը:

Անցնենք ի ն ք ն ա վ ա ռ ո թ ե ա ն:

Ասում է թէ Հայ ժողովրդի վեճակը կարելի է բարելաւել ընդհանուր Թիւրքիայի վերածնութեամբ և նրա նորագոյն պետութեան շարքին մտնելովը, ու առաջարկում է մեզ համերաշխել՝ ն ա խ ա պ է ս Հայկական Դատը Թողնելու պայմանով:

Մենք ասում ենք որ Թէօրիապէս շատ բան կարելի է, մինչդեռ մեզ պէտք է աւալ իրականութիւն, որպէսզի նրա վրայ կանգնենք. — Հայկական Դատը այսօր իրականութիւն է, որովհետեւ նա ունի ազգակ՝ Հայ ժողովուրդը և նրա ծոցից բխած կուսակցութիւնները. որովհետեւ այդ Դատը միջազգային բնաւորութիւն է ստացել եղած դաշնադրութիւններովը և մի թիւ էր մնացել իր լուծման սկզբնաւորութեան մէջ մտնելուց՝ մայիս 11-ի ծրագրովը, որ մեր արեան և բաղունների արդիւնքով է եղել, և որովհետեւ համոզուած ենք թէ ունինք կենսականութիւն, փտահ և համոզուած ենք որ մի օր կարող պիտի լինենք մի ընդհանուր ճիշդ լուծման հանգոյցը բանալ, և քանի որ այդ Դատը ըստ էութեան, սկզբունքով չի հակասում Թուրք կայսրութեան մէջ եղող մեր բախտակից ժողովրդների ազատագրութեանը, և որովհետեւ Հայ ժողո-

վուրդը ամեն րոպէ քննադատման արհաւիրքի տեսքին է կանգնած, ուստի մենք, որպէս կուսակցութիւն, մեր արդէն ունեցած դիրքը պահելով հանդերձ, ո՛չ միայն չենք ուզում հակառակել ամբողջ պետութեան վերածնութեանը, այլ մենք, որ մեր գործունէութեամբ արդէն այդ վերածնութեան մի բաժինն ենք բերում Հայաստանում, — մենք պատրաստ ենք աւելին էլ աւելու, — այն է՝ մեր անկերտապահ ծառնակցութիւնը և գործակցութիւնը տալ, որոշ պտրտականութիւն ունենալ, որ պէտք թիւրքիայի բոլոր ժողովուրդները անխոր, իրենց ժողովրդական, միահեծանական իրաւունքը ձեռք բերեն և այդ պետութիւնը դնեն ժողովրդական իրաւունքից ծագող սկզբունքների վրայ:

Մենք ասում ենք, որ մեր ծոտակայ, որպէս կուսակցութեան, նպատակը պարզ է, որոշ է, եթէ կայ մի ուրիշ ճանապարհ ո՛չ միայն հայ ժողովուրդը, այլ թիւրքիայի բոլոր ժողովուրդները ազատագրելու, այն ժամանակ մեզ ցոյց տուեցէք պայմանները, և շուտով կարող ենք համաձայնուել, քանի որ մենք սօցիալիստներ ենք, այսինքն մարդիկ, որոնք Հայկական Դատը չեն ուզում հակառակեան մէջ դնել ընդհանուր սօցիալիզմի, և այլ ժողովուրդների պրոլետարական ազատագրութեան շահի դէմ:

Մենք ցարդ մենք դեռ բառեր ենք միայն ըսել, գործնական դեռ ոչինչ, բացարձակապէս ոչինչ չկայ: Ընդհանուր թիւրքիայի հարցը պաշտպանողները դեռ անկարող են լինել իրարու հակառակ, մէկը թիւրքիայի վերանորոգումը կապում է տիրող վեհապետի փոփոխութեան՝ անձի հետ, միւսը՝ Միահեծան Սահմանադրութեան, մի երրորդը՝ ընդհանուր գործակցութեան, բայց և՛ ո՛չ մէկը կարողութիւն ունեցաւ հրապարակ դնել մի՛ ծրագիր, որից երևար, որ արդարև այդ ծրագրի իրականացումով թիւրքիան կարելի կլինէր նորագոյնացնել, — բոլոր ժողովուրդների կամքից բխած քաղաքական հաստատութիւնների գոյութեան պայմանով:

Երբ դեռ ոչինչ, տակաւին ոչինչ չկայ, այդպիսի պարագաներում մենք պիտի լքենք Հայկական Դատը, դա ու՛ճիր չի՛ վրնիլ:

Ի՞նչ է ասում թիւրք մասսան՝ հարցնում ենք, — պատասխան չկայ. ոմանք՝ նոյն այդ ընդհանուր թիւրքիայի անունով խօսելիս՝ մասսայի գոյութիւնը չեն էլ ուզում ճանաչել և ներքան բաժին տալ պետական գործերում:

Ոմանք էլ մեզ տալիս են Քեմալ պէյի ճաշակատու օտանաւորները, ցոյց տալու համար թէ թուրք տարրն էլ նուրբ զգացումներ ունի, — անշուշտ, այդ ոչ ոք չի ժխտում, բայց միևնոյն ժամանակ պէտք չէր տալ Քեմալ պէյի և իր ընկերների 60-ական թուականների գրածներն էլ, որ օսմանցիկացման գաղափարն է դրւում, այն էլ սրով և հրով:

Եւ երբ այս ընդհանուր խուճապի մէջ մենք առաջարկում ենք թիւրքիան վերանորոգելու մեր հայեացքը, առելով՝ որ եթէ թիւրքիան կարելի է վերանորոգել, ապա դա պիտի լինի այն ուղղութեամբ, որ հարկաւոր է ամբողջ թիւրքիային ընդհանուր պետական ռաճկաւարական հաստատութիւններ տալ — քառանկյան բանաձևով ստեղծած մի ընդհանուր պարլամենտ և բաղկացուցիչ ժողովուրդների համար լիակատար քաղաքական ինքնավարութիւն — այն ժամանակ պատասխանւում է թէ դա բոլորում է նրանից, որ մենք դարձեալ ազգայնականներ ենք:

Իրո՞ւ է այդ:

Տեսնենք:

Եւ մեր թէզն է որ թիւրքիայի նման բաղկացուցիչ պետութիւնների համար քաղաքական ինքնավարական սխաւեմը ո՛չ միայն անհրաժեշտ է, այլ ոչ-հակառակ սօցիալիզմի և պրոլետարական ազատագրական գործին, ուրիշ խօսքով՝ այդ առաջարկը հեռւանք չէ՛ ազգայնական ոգու:

Ի՞նչ է ինքնավարութիւն:

Ինքնավարութիւն բառով է մեր մէջ արտայայտուել յունական ծագում ունեցող *autonomie* բառը, որի տառայի նշանակութիւնն է *ինքնօրինութիւն*:

Ինքնավարական իրաւունքը ի՞նչ է՞ քի բովանդակում բացարձակ միահեծանական իրաւունք. նա մի ժողովրդի չի տալիս անսահման անկախութիւն և ազատութիւն՝ ներքին և արտաքին բոլոր խնդիրների մէջ հաւասարապէս: Քաղաքական ինքնավարութիւն ունեցող երկիրը պետական ամբողջութեան մի մասն է կազմում, զուրկ արտաքին ներկայացուցչական իրաւունքից: Ինքնավարութիւն ունեցող ժողովուրդը, իր սեպհական օրէնքներով կառավարւելով, անհատական օրէնադրական և գործադրական իշխանութիւն ունենալով՝ միասին՝ ամբողջութեան իրաւունքի վէճ ո՛չ միայն հակադրութիւն չի կազմում, այլ նրա լրացուցիչ, ներդրւածիկ մասն է դառնում:

Տեսնուի ան առանձն աշխատակալ պայմանները բոլորած իրաւունքի՝ համաձայն՝ ընդհանուր պետութեան կազմի մէջ գտնուող մի ժողովուրդի իր սեպհական օրէնքներով կառավարուելու ընդունակութիւնը կ'ընտելւի է՛ ինքնավարութիւն:

Ո՛չ թէ այսօր, այլ շատ վաղ ժամանակներից սկսած՝ բաղձատար, տարատես և բաղկացուցիչ կազմ ունեցող պետութիւնների մէջ քաղաքական ինքնավարութիւնները համարուել են թէ անհրաժեշտութիւն և թէ անխուսափելիութիւն, որպէսզի այդպիսով պետական ընդհանուր ներդրւածիկութիւնը պահպանուի, յառաջադիմութեան մէջ դանդաղ և համապատասխան ժողովրդական իրաւունքից բխած իրաւական պետութեան գոյութեանը: Անգղիա, Միացեալ Նահանգներ, Աւստրիա, մասամբ, կառավարական այդ սխաւեմն են ընդունում իրենց պետական ամբողջական կազմը պահելու և արտայայտուած ժողովրդական առանձնաշատուկ պայմաններին և պահանջներին բաւականութիւն տալու: — Նոյն այդ սխաւեմն ստիպուեցաւ ընդունել և՛ հին քաղաքակրթութեան ներկայացուցիչներէց Հռոմը:

Ինքնավարութիւնը, եթէ անվերածելի պահանջ կայ, ո՛չ միայն իր բնատրութեամբ չի հակասում քաղաքական ընդհանուր կեդրոնացման սխաւեմին, այլ ազդուազին միջոց է տալիս, աւելի յարմարաւոր պայմաններով, այդ կեդրոնացումը առաջ բերելու՝ առանց վնասելու ընդհանուր պետական իրաւունքին և առանց ոչնչացնելու այն իրաւունքը, որ տեղական պայմանները հրաճայական և անհրաժեշտ են դարձրել:

Արդ, բաղկացուցիչ պետութիւնների համար ինքնավարական սխաւեմի փաստաբանութիւնը չի կարող նկատուել հետեւանք ազգայնական ձգտումներին և հակասօցիալիստական միտումներին: Ամբողջ խնդիրն այն է, թէ արդեօք խնդրի առարկայ եղող պետութիւնը և ժողովուրդը այդպիսի անվերածելի և անհրաժեշտ պայմաններ ներկայացնում է թէ ոչ, և կառավարական այդպիսի մի սխաւեմ ցանկալի է սօցիալիստական և պրոլետարական ազատագրական գործի շահի տեսակէտից:

Խնդիրն աւելի պարզաբանելու համար՝ խօսքը տալիս ենք գիտական սօցիալիզմի հայր Կարլ Մարքսին:

Մենք կրկնում ենք, յայտարարում է՝ Մարքս (Դեմոկրատիքական Պանդակով) որ բացի լեհերից, ուղանելից և, ծայրագոյն պարագայում, թիւրքիայի սլաւոններից, սլաւոնական և ո՛չ մի ժողովուրդ ապագայ ունի, և այդ պարզապէս այն հիմունքով, որ մնացած բոլոր պլանները զուրկ են պատմական, աշխարհահարկային, քաղաքական և ճարտարագործական ինքնութիւնից: Եւ կ'ենտեղանուի է՛ ան պայմանները: Արդ, ընդհանուր թիւրքիայի վերածնութեան և նորագոյն

Հիմունքներով կազմակերպության հարցում խնդրի առաջին առարկան պիտի դարձնել՝ թե՛ այդ պետության մեջ բովանդակված ժողովուրդները ունին «պատմական», «աշխարհագրական» և «ճարտարագործական ինքնուրոշություն» ու կենսականության պայմաններ»։ — Եթե ունին — ապա մի նորագոյն պետության ներկայացրած պայմաններին համեմատ էլ կազմութիւն պիտի տալ։ — Որ թրքահայ ժողովուրդը, Հայաստանը, Մարքսի հարցրած պայմանները ունի, դրա մասին ո՛չ կառկածել կարելի է և ո՛չ էլ վիճել, խնդիրը այնքան որ պարզ ու որոշ է։

Շարունակենք Մարքսի պատճառաբանությունը. «Զեխերը, երբեք պատմություն չեն ունեցել»։ Պատմություն ասելով Մարքսը այստեղ հասկանում է այն, կարծում ենք, որ Զեխերը չեն նպատակ, ազդակ չեն եղել ընդհանուր ճարտարական պատմության և քաղաքակրթության յառաջխաղացմանը։ — Հայ ժողովրդի համար կարելի է այդ առարկությունը նրա դերը ընդհանուր ճարտարական յառաջապահ գնդի մեջ, որոշ չափով, անվիճելի պետք է համարել, այդպէս համոզուած են, այդ վերջնական եզրակացությունն եկած են բոլոր նրանք, որոնք Հայ ժողովրդի պատմությունը կարդացել, ուսումնասիրել են և գիտակ են նրա արած ծառայության ընդհանուր քաղաքակրթության գործին։

Աչքի առաջ պետք է ունենալ և՛ այն պատմական հանգամանքը, որ Մարքսը իր այդ թէզը դրել էր ազատամիտ Շմերլինգի պաշտպանած ինքնավարական դադարների իրագործումից առաջ։ Շմերլինգի յղացած և, որոշ չափով, կիրառության մտցրած ինքնավարական սկզբունքների մեջ պիտի որոնել այն՝ որ չէիքերը, սյովենները, խրուստները ո՛չ միայն այսօր վճռական դեր են խաղում Աստորիական ընդհանուր պետական կեանքի մեջ, այլ որ նրանք մտցրին մի նորագոյն ոգի և չթողեցին որ այդ բազմատարր պետությունը համադերժանականների որսը դառնար։

Չլինէր Շմերլինգի և Բէօստի սկզբնական ջանքը, Աստորիական վաղուց բաժան-բաժան եղած կլինէր։ Եւ այդ Ֆէօդալական կայսրությունը անցեալ դարու շատ խռովություններից հեռու մնացած կլինէր, եթե այդ երկու պետական անձնատուրությունների սկզբնաւորած սխտեմը աւելի ընդլայնուէր և նրանց զարգացմանը չխանգարէր Հէյմերլէի և Աուերսպերգի խիստ կեղծանցուցիչ ձեռնարկները։ Եւ աւստրիական Սօցիալ-Դեմոկրատիան բնութեան դէմ չէր կարող երթալ. նա այդ երկրի մեջ ներկայացուած ժողովուրդների անվերածելի պայմանները՝ աշխարհագրական դիրքը, պատմությունը, ինքնուրոշությունը և կենսականության պարագաները աչքի առաջ ունենալով՝ ոչ միայն իր սօցիալիստական կազմակերպությանը տուեց ինքնավարական սխտեմ — ինչոր չէր խանգարում ընդհանուր միությունը և կեղծանցումը պահելուն — այլև Աստորիայի բաղկացուցիչ ժողովուրդների ինքնավարական կազմի փատաբանը հանդիսացաւ, և դրա հետեւանքը եղաւ այսօրուան այն հրաշալի յաղթությունը, այն արգասաբեր նուաճումը, որ նա արաւ։ — Եւ մի նուաճում, որ նոյն իսկ եւրոպական լուրջ հետևանքներ պիտի ունենայ։

«Բացի դրանից, շարունակուած է Մարքս, եթէ աւստրիական սլաւոնները կազմէին հոծ բազմություն, ինչպէս են լեհերը, հունգարացիները, իտալացիները, եթէ նրանք միասին կազմել կարողանային 15-20 միլիոն բնակչություն ունեցող մի պետություն, — այն ժամանակ գուցէ նրանց պահանջները լուրջ նշանակություն ունենային»։ — Խնդիրն այստեղ աւելի կուլտուրական զարգացման մասին է, Մարքսը չի ուզում որ սլաւոնական ցեղերը անջատուեն և կամ իրենց քաղաքական ինքնավարությունը ունենան, որովհետեւ նրանք կուլտուրական, քաղաքակրթական այն բարձրությունը չունենին, ինչոր պահանջուած է առանձին կամ ինքնավար քաղաքական իւր-

բաղկություններ կազմելու համար։

«Յաճառ», «բերա» սլաւոնի դէմ նա դնում էր կիրթ և նուրագոյն քաղաքակրթության ռազմականներից մին՝ Գերմանացին։ Ուրեմն ինչո՞ւ զատուէլ մի ճարմնից, երբ նա զարգացման աւելի բարձր ձևեր և պայմաններ է ներկայացնում։

Առնենք թուրք կուլտուրան և հայ կուլտուրան. առնենք թուրքը որպէս քաղաքակրթության տարր, որպէս կուլտուրաբեզեր և հայը. ո՞րն է բարձր։ Ի՞նչ է տուել հայ ժողովրդին թուրք քաղաքակրթությունը այս հարկւրաւոր տարիների ընթացքում, — սով, համաճարակ, աղքատություն, թշուառություն, կազմակերպուած հարստահարություն, քաղաքական և տնտեսական ստրկություն, և ամէնի գլուխ գործոցը՝ պարբերական կոտորած, բնաջնջում, — թուրքը մեզ տուել է ռայեայունություն — այսինքն՝ «անասունից էլ ստոր» մի դրություն։ —

Իսկ հայը ինչ է տուել թուրքին — արհեստ, գիտություն, վաճառականություն, թատրոն, ճարտարապետություն, ծործոր հոսող իր քրտինքի ամբողջական արդիւնքը, իր կեանքը։ Զենք կարծում որ Մարքսը ինքը թուրքին և հային — որպէս պատմության թատերաբեմի վրայ գործող ոյժերի — համեմատության առնելով՝ հային անհամեմատ բարձր չգտնէր։

Այստեղ, համառօտակի, չենք խուսափիլ շօշափել մի կէտ էլ, թէ և այդ մասին երբեմն առիթ ենք ունեցել խօսելու, — դա մեծամասնության խնդիրն է։ Մեր հակառակասունքը բարի են լինում պատճառաբանելու թէ լինչպէս 1-2 միլիոն թրքահայ ժողովուրդը կարող է դէմ կանգնել 20 միլիոնի։ — Հարց. այդ 20 միլիոնը՝ որ հակադրում են հային, իրարու շահակից և հային հակաշահակից են. կա՞յ այդ 20 միլիոնի մեջ Արաբը, Մակեդոնացին. 20 միլիոն չէ՞ եթէ խնդիրը գալիս է ցեղայնության — ինչոր տեղ չպէտք է գտնէր ներկայ վեճի մեջ — միայն երեք միլիոն օսմանի ունինք մեր առաջ՝ որի մէկ միլիոնը փչացած, այլասերուած մի տարր է։

Հայաստանի մեջ հայերը փոքրամասնություն են կազմում ընդդէմ միւսլիմաններին, ասում է, բայց ինչո՞ւ ընդդէմ միւսլիմաններին. եթէ միւսլիմանության, ապա նրան պիտի հակադրել քրիստոնէություն (ասորի, յոյն) — ահա՛ թէ մեր հակառակասունքը ո՛ր աստիճան շեղում են բռն խնդրից և մեզ էլ ստիպում շեղուէլ։

Հայաստանի մեջ ո՛ր տարրն է մեծամասնություն կազմողը, հայը թէ օսմանցին (թուրքը), հայը թէ քուրդը, հայը թէ չերեքցը. — ոչ միայն՝ առանձին առանձին վեր առնելով՝ հայ տարրը աւելի է քան միւս տարրերը, այլ միւս քրիստոնէաներով՝ նա գրակշռում է, նոյն իսկ աշխարհ, մնացած տարրերի ամբողջութեանը։ Մենք թողնում ենք թէ ինչպէս այդ մեծամասնությունն և փոքրամասնությունն խնդիրը խթաններից մին եղաւ հայկական նահանգների վարչական նոր բաժանման և հայկական կոտորածին։ — Լօնդոնի թուրք դեսպանի սովորությունն էր ասել, կայ Հայաստան, բայց ո՛չ հայ։

Երբ խնդիրը գալիս է Հայաստանի ազգաբնակչության համեմատական թուլին՝ հարց, ո՞վ է կազմել ճարդահամարը. կա՞յ թիւերիայի մեջ ժողովրդական վիճակագրություն, — ոչ։ Այն հեղինակները, որոնք այդ մասին տեղեկություններ են տուել, կարողացել են մերձենալ իրականությանը, — նախ որ քուրդը վաճկատուն լինելով, նստակեաց կեանք չվարելով, անփորձ ճանապարհորդի կողմից հաշուել է առնոււմ, առնուազն, երկու տեղ. երկրորդ նա՝ որ գիտէ թէ Եւրոպացին պաշտօնական ինչ սալթանաթով է պտտում Հայաստանում, թէ ինչպէս թուրք գալթիները նրան շրջապատած, հայ և օտարազգի թարգմանների միջոցով ասում, բացատրում են այն՝ ինչոր կանխապէս կարգադրուած և հրամայուած է եղել — այդ պիտի խնդիրներից տեղեկություն ունեցաւ մի ամբողջ ժողովրդի Դաւալ չի կարող վճռել միւսերի պատահական ճանապարհորդների եզրակացությունների կամ տուած վայրի վե-

րոյ տեղեկութիւններն վրան: Թուրք պաշտօնական թուանշաններին կարելի է ամենադոյզն հաւատ ընծայել:

Գիւլիզարի պատմական անցքից և Մուսաբէկի շահատակութիւններից յետոյ Հայաստան ուղարկուած անգղիական քննիչի պաշտօնապէս գտած, չափած, ձևած, որոշեալ շրջանակի մէջ դրուած ուղեգրին և հարց ու փորձին մենք ներկայ ենք եղել:—Նախապէս Հայգիւղացիներին—ճանաչող յուսալիցներին ըստ ռուս բերրկրատական ուժի—պատրաստել, սովորեցնել թէ ի՞նչ հարցերի ի՞նչ պէտք է պատասխանել, նոյնը և թուրքին, քիւրդին, ցոյց տալ այն, ինչոր կարելի է և պէտք է՝ սրանք են այն շրջանակը, որի մէջ պտտուած են ճանապարհորդները: Յիշում ենք թէ ինչպէս, կառավարական տարրերով շրջապատուած, Բիթլիսի հայ հասարակութեան ներկայացուցիչները հաղիւ թէ քառորդ ժամուայ «բարով ժամանեցար» ի տեսակցութիւն ունեցան նրա հետ, թէ և նոյն անձի ձոտ օսմանի սալթանաթի ամէն նրբութիւններով մտնում, ելնում էին Բիթլիսի այն հայ աղաները, որոնք որ պէտք է տեսնէին և խօսէին, ինչոր պէտք էր, ինչոր իրենց յանձնարարուած, ասուած էր:

Մէկ ուրիշ հարց էլ կայ. — միթէ պատմական խնդիրները վճռուած են միայն կոշտ թուի համեմատ: Թէեւ այդպէս նկատելու լինենք, այն ժամանակ Բուլղարիան երբեք չպիտի ազատուէր, սրովհետեւ Բերլինի դաշնադրութեան ժամանակ օսմանի տարրը այդ երկրի մէջ աւելի շատ շատ էր, քան բուլղար, այնպէս որ Բուլղարիայի այն ժամանակուայ և Հայաստանի այս օրուայ դրութիւնը եթէ համեմատութեան առնելու լինենք, առաւելութիւնը կմնայ Հայաստանի կողմը, և այդ իրողութիւն է:

Մինչև ցարդ ասուածներից պարզ է, որ Մարքսը բաղկացուցիչ պետութիւնների մէջ տարրացած ժողովրդների քաղաքական ինքնավարական սկզբունքին հակառակ չէ եղել ըստ ինքեան, որպէս սոցիալիստական, պրոլետարական ազատագրութեան դատից բխած անպայման մի սկզբունքի, ո՛չ, այլ որովհետեւ նա դրա յարմար, համապատասխան պայմաններ չի տեսել սլաւոնական ժողովրդների պահանջների մէջ. և որովհետեւ նա այդ պայմանները գտել է հունգարացիների մէջ, ուստի նրանց էլ ինքնավարական, նոյն իսկ անջատական, իրաւունքին սրաշտպանն է հանդիսացել, — այսինքն Մարքսը երկրային, տերրիտորիալ, ինքնավարական իրաւունքը սոցիալիստական շահի տեսակետից օգտակար և պէտքական է համարել կուլտուրապէս աւելի բարձր և հոծ թիւ ներկայացրնող ժողովրդների համար, ի հարկէ կուլտուրայի բարձրութիւնը կամ ցածրութիւնը այստեղ տիրող, նուաճող ժողովրդի ներկայացրած կուլտուրան է: — Գերմանացի բարձր էր բոհեմացուց, ինչո՞ւ ուրեմն բարձր կուլտուրան տեղի տար ստորինին, — որովհետեւ ազգայնական փառասիրութիւններ կա՞ն, որովհետեւ «արդարութիւնը», «իրաւունքը», «ազատութիւնը» այդպէս է պահանջում — դա արդարացուցիչ պատճառ չէ կարող լինել:

Հետաքրքիր պիտի լինէր թուրք ժողովրդի, թուրք պետութեան ներկայացրած բարձր կուլտուրայի փաստերը դնել հայ ժողովրդի առաջ: Կուլտուրապէս հայ ժողովուրդը անհամեմատ բարձր է թուրք ժողովրդից, իսկ թէ մի անկախ, մի ինքնավար Հայաստան որքան ընդունակ կլինի կարճ ժամանակամիջոցի մէջ յառաջադիմել և աւելի բարձր կուլտուրայի տէր դառնալ ու իր շրջապատող, իրեն հետ խառն եղող այլ տարրերին բարձրացնել, — դրան սպացոյց երէկուայ ստորուկ, ռաջայ Բուլղարիան, Ռումանիան, Յունաստանը, որ հակառակ իրենց ունեցած նորագոյն պետութեան suis generis թերութիւններին, անհամեմատ բարձր են իրենց երէկուայ տիրողից՝ այն ճայր պետութիւնից, որից իրենք բաժնուեցան:

Շարունակենք հետևել Մարքսի մտքի թելին «... Իրօք՝ չափազանց հաճելի պիտի լինէր գերմանացիների և հունգարացիների դրութիւնը — բացականչում է Մարքսը, — եթէ աւստրիական սլաւոնները հասնէին իրենց, այսպէս ասած, իրաւունքներին»:

Եւ ի՞նչ պիտի լինէր դրա հետևանքը, — այդ ժամանակի աչքովը դիտելով գալիք խնդիրներին.

— Սլիւզիայի և Աւստրիայի մէջ՝ չէիս-ծօրավեան անկախ

պետութիւնը ցցի պէս առաջ պիտի վարսուէր և այդպիսով Աւստրիան ու Շտիրիան իրարուց պիտի ընդհատուէին ու կտրուէին: Կը կազմուէր (ժամանակի հրապարակասօսները այդպէս էին ասում, ամէն ինչ ցեղայնութեան վրայ հիմնելով) «Հարուստ-Սլաւոնական Հասարակապետութիւնը», որա հետեւանքը այն կլինէր որ Աւստրիան, ուրեմն Հունգարիան, կը գրկուէին Ալբիականից և Միջերկրականից՝ որպէս մի արիւնատար անհրաժեշտ երակից, իսկ Բրեկեման Գերմանիան էլ, որ նման է կրծոտուած հացի, անմիջապէս կողոզուէր սլաւոն ազդեցութեամբ (յետադիմական) և ի՞նչ կլինէր դրա միւս հետևանքը, — ռուս ինքնավարութիւնը (յետադիմութիւնը) սլաւոն այդ տարրին իր ազդեցութեան տակ կառնէր (ինչոր համապարտանքների խանդավառ բաղձանքն էր) ու այդպիսով ո՛չ միայն Աւստրիան, Հունգարիան և նրանց մէջ ամփոփուած աւելի բարձր կուլտուրական ժողովրդներն էին, որ պիտի կաշկանդուէին և կուլտուրապէս ցածրին դ ո հ երթային, այլ նոյն իսկ Գերմանիան, — Կանտի, Գեթթէի, Յիլստէի Գերմանիան. — ահա թէ ինչո՞ւ Մարքսը իրեն իրաւունք է տալիս հարցնելու, թէ այդ բոլորը ինչո՞ւ, — «նրա՞ համար, որ գերմանացիները չեխերի և սլաւոնների մէջ մտցրին վաճառականութիւն, ճարտարագործութիւն, արգասաբեր երկրագործութիւն և կրթութիւն»:

Յեղալին և այլ բնադանցական իրաւունքների համար կուլտուրան, քաղաքակրթութիւնը չպէտք է ողջակիզուի. — ահա Մարքսի պնդածը: «Եւ վերջապէս ո՞ր է «յանցանքը», ո՞ր է «անէծքի արժանի քաղաքականութիւնը» (սկնարկ դէպի համապարտանքներ և Բակունինը) — նրանո՞ւ որ գերմանացիները և հունգարացիները պատմութեան այն շրջանում, երբ Եւրոպայում մեծ պետութիւնները «պատմական անհրաժեշտութիւններ» էին՝ խարաղանդելով (քոթիկելով) ի մի հաւաքեցին բոլոր այդ փոքր խեղճ, անօգնական ազգի կնէրին (nationen) և մէկ պետութիւն կազմեցին ու այդ կերպով նրանց ընդունակ դարձրին հաղորդակցելու այն պատմական դարգացմանը մէջ, որին նրանք բոլորովին խորթ կը մնային, եթէ իրենք իրենց թողնուէին: Յայտնի բան է այդպիսի բաներ չեն անում, առանց որ ազգային մի քանի փափուկ ծաղիկներ բռնի կերպով չը ոտնակոխուէին... իսկ հիմա քաղաքական կեդրոնացումը և՛ աւելի անհրաժեշտ է ճարտարագործութեան (էնդուստրիա), վաճառականութեան և ճանապարհների հաղորդակցութեան ահագին յառաջադիմութեանը պատճառաւ»:

Պատմութեան փիլիսոփայութեամբ պարագրներ չհամար ոչ միայն սուսանձին շահագրգռում, այլ, ճանաչանդ, մի նորութիւն պիտի լինէր իմանալը, լսելը, որ կողմից որ կլինէր, թէ սօմանլիները, թուրքերը պատմական ի՞նչ զարգացման ընդունակ դարձրին՝ գոնահարելով ի մի հաւաքած «ազգիկներին»: — Պատմութիւնը մեղ տուել է երկու որոշ վճիռ, առաջինն այն՝ որ թուրք պետութիւնը ոչնչացրեց մի յառաջադէմ քաղաքակրթութիւն այն ամբողջ տարածութեան վրայ, ուր ինքը ոտք դրեց. երկրորդ՝ որ թուրքը, օսմանլին չէ ունեցած, չունի իր մասն աւուր մտածողութիւնը, այլ նա իր մտածողները ստացել է Արաբից և Պարսկից և ինքը եղել է լոկ նիւթական բիրտ, կոպիտ ոյժ, — այդ վերջնական կարծիքն ունին բոլոր մահճեղականագէտները (տես Ընդհ. Պատ. Լավիսի և Ռամբոյի)

Իսկ թէ չորս-հինգ հարիւր տարի Եւրոպայի հետ անմիջական յարաբերութեան մէջ եղող թուրքը, օսմանլին, ո՞ր աստիճանի իւրացրեց եւրոպական քաղաքակրթութիւնը և իր պետութեան մէջ այդ քաղաքակրթութեան յառաջամարտ ազդակը հանդիսացաւ — այդ մասին բերան բանալն անգամ աւելորդ է: Անշուշտ սրանով չենք ասում որ թուրք ժողովուրդը բնաւ չի յառաջադիմել, — երբեք. բայց ի՞նչ աստիճան, ի՞նչ ուղիւթեամբ, նպատուղ թէ խափանող է եղել օտարասեռ տարրերի յառաջադիմութեանը և կուլտուրական աւելի բարձր զարգացմանը. — այդ է խնդիրը:

Մարքսի կեդրոնացման ամբողջ թէօրիան այն է, որ ժամանակակից յառաջադիմութեան և քաղաքակրթութեան հետ այլևս անհաշտելի են ազգերի սուսանցացումը, անկախ որմերի և պարիսպների մէջ պարփակուիլը և այդ սահմաններից միւս կողմը եղողներին իրեն հակառակորդ, թշնամի նկատելը — սուսանցացնող այդ որմերը պիտի

ընկնեն ճակատագրականօրէն, և Հենց այդ որմերի ընկնելուն է, որ պիտի նպաստի սօցիալիստը, նա որ սօցիալիզմի և պրոլետարական ազատագրութեան շահի անունովն է խօսում: Այդ կէտը Մարքսը այսպէս է փաստում. «Բուրժուազիայի զարգացումով, վաճառականութեան ազատութեամբ, համաշխարհային վաճառանոցով, ճարտարագործական արտադրութեան միատեսակ ձևով և նրան համապատասխանող պայմանների զոյութեամբ՝ հետզհետեւ աւելի ու աւելի են ջնջւում ազգային առանձնացումները (կղզիացումները) և ազգերի մէջ եւրոպ. հակամարտութիւնները: Պրոլետարական տիրապետութիւնը և՛ աւելի կ'նպաստի դրանց ջնջմանը»:

Շատ ճիշտ է, մեր սօցիալիստական պրօպագանդան զրա երաշխաւորութիւնը արդէն տալիս է, որ մենք ազգերի «առանձնացման» և ազգային «հակամարտութիւն»ների դէմ ենք, խնդիրը «պրոլետարիատի» տիրապետութիւնը իրականացնելու մասին է՝ առւած մի երկրում:

«Սօցիալիզմ և Երկրագործութիւն» իր գրքի մէջ Գ. Գատտին ասում է, որ Մարքսը, «Յեղափոխութիւն և Հակաշեղափոխութիւն» իր գրքի 8-րդ և 9-րդ գլուխների մէջ, «ցեղը նկատում է որպէս գլխաւոր ազգակ մարդկային ճարտարագործական պատմութեան մէջ»: «Գաղափարի այդ ուղղութեամբ Մարքսիստների շատ քիչ բան արածը՝ մասնանկշեւուց յետոյ՝ Գատտին, «կլիմայի, հողի և ցեղի» փոխադարձ յարաբերութեան մասին խօսելով՝ ասում է. «Հարաւային (խտալացիների) անհոգութեան մասին խօսելով՝ մենք ասացինք որ խտական խոշոր սեպհականատէրերի յուլութեան ոգին (ինտելիցան) Լատինների ցեղային մի գիծն է, որ անհատական եռանդի կողմից աւելի խեղճ են՝ քան Անգլո-Սաքսոնները, օրինակի համար: Բայց երկուսի սկզբնական բացատրութիւնը պէտք է համարել կլիմայի և հողի ցեղերի այդ տարրական ազդակները... Թէև կլիմայի անկան մասնաւոր պայմաններ էլ կարող են նպաստաւորել ցեղերի կազմաւորմանը... բայց կլիմայի և հողի տեղադրական ու մշակութեան պայմանները օրգանիզմներին յարմարեցնում են ֆիզիքական միջավայրին՝ յաւիտեական ընտրականութեան մի աշխատանքով: Կենդանիները բոյսերից նուազ չեն փոխւում, անդամային մասնաւոր բազմազանութիւնների հարկադրւելով՝ աշխատանքի առանձին պայմանների ենթարկուելով, նրանք ձեռք են բերում ձևեր, կեանքի սովորութիւններ, մտաւոր և ֆիզիքական կարողութիւններ, մասնաւոր բարձր ու վարքեր: Կարելի է ասել, որ ցեղը այն հատուածակողմն (prisme) է, որի միջով արտայայտւում են կլիմայի և հողի միացած մեծ ազդեցութիւնները»:

Թէև ընդունենք թէ ճարտարագործութեան մէջ ցեղային յատկութիւնները որոշ դեր ունին, և զրանով մի ցեղ միւսից գերակշռող կարող է լինել, ինչպէս գերմանացին բուհենացուց՝ Մարքսի օրինակով, — ահա Հենց այդ կողմից էլ Հայ ցեղը որ և է հարկ չունի վճարելիք թուրք ցեղին՝ — միևնույն կլիմայի տակ, միևնույն հողի վրայ բնակւող երկու ցեղերից հայը անհամեմատ բարձր է եղել թուրք ցեղից և նրան գերակշռել է «մարդկային ճարտարագործութեան պատմութեան մէջ»: Որ հայը, որպէս ցեղ, աւելի արտադրող, աւելի ընդունակ, աւելի բարձր է քան օսմանիւն — դա հակաճառութիւն չի կարող վեր առնել. դուռւած, պարզուած ա՛մենօրեայ շօշափելի իրողութիւնները այնտեղ են: Ուրեմն ցեղային տեսակէտով էլ ո՛չ քաղաքակրթութիւնը, ո՛չ սօցիալիզմը և ո՛չ էլ պրոլետարական ազատագրութիւնը կտուժի, եթէ հայ ժողովուրդը իր ինքնավար կեանքը ունենայ, քանի որ նրա յարաբերութիւնը, որպէս մի պետութեան բաղկացուցիչ մասի, նոյնը չէ դեպի օսմանիւն, ինչոր գերմանացուն դեպի պլանները:

Այն ժողովուրդները, մասնաւոր բաղկացուցիչ կազմ ունեցող պետութիւնների մէջ տարրացածները, որոնք ինքնուրոյն կեանքի պայմաններ չունին, նրանք պիտի կորչեն՝ այսպէս թէ այսպէս:

Մարքսը այդ հանգամանքը աչքի առած ունենալով հետևեալն է նկատել. «Չիսերը 1848-ին յեղափոխութիւն արեցին, բայց ամենից աւելի արգահատանքի արժանի նոյն այդ չիսերն են, որովհետեւ յաջողին թէ չլաշտին նրանք անպատճառ պէտք է կորչեն»:

Անշուշտ այսպէս է լծացած և կենսականութեան ինքնուրոյն

*) Պատմութեան փիլիսոփայութիւն — Մարքսի եւ Էնգելսի:

պայմաններից զուրկ ժողովուրդների վախճանը: Սակայն, նկատենք, Չիսերը չմնացին այն, ինչոր էին 1849-ին. այդ ժամանակահանգի մինչև այսօր նրանք ո՛չ միայն կորչելու նշաններ ցոյց չեն տալիս, այլ իրական յառաջդիմութեան շաւղի մէջ մտնելով՝ դարձել են մի կենդանացուցիչ, վերանորոգիչ տարր աւստրիական կայսրութեան և ամէն տեղ յաղթականօրէն հարուածում և յետ են մղում գերմանական ազգայնականութիւնը:

Ի՛նչ պիտի լինի անընդունակ, յետամնաց, ժամանակակից քաղաքակրթութեան պահանջներին չհամապատասխանող, պատմութեան մի մասը չեղալ և կենսականութիւնից զուրկ ժողովուրդների ապագան:

Մարքսը այդ մասին հետևեալ տեսութիւնն ունի, յանձին աւստրիական սլաւոն ժողովուրդների:

«Փրանսիական պրոլետարիատի յաղթական առաջին ապստամբութիւնը երբ տեղի կունենայ... աւստրիական գերմանացիները և հունգարացիները կաղապարեն ու արեան վրէժխնդրութեամբ կհատուցանեն սլաւոնական բարբարոսներին: Համաշխարհային պատերազմը, որ այն ժամանակ տեղի կունենայ, բեկորների կը վերածի սլաւոնական այդ Դաշնակցութիւնը և կոչնչացնի այդ բոլոր եղային ազգերին՝ նրանց անունն անգամ անհետ դարձնելով: Մօտակայ համաշխարհային պատմութիւնը կտալի, որ ո՛չ միայն յետագիւնական դասակարգերը և արքունական տները ջնջուեն, այլ աշխարհի երեսից անհետանան բոլոր բեկցիօներական ժողովուրդները»:

Ուրեմն, ազգերի բացարձակ կղզիացում և ազգայնական հակամարտութիւնների վրայ յենուած յարաբերութիւններ՝ դրանք անհաշտելի են պրոլետարական ազատագրութեան հետ. մի տեղ սօցիալիզմի տիրապետութիւն, մի ուրիշ տեղ ազգայնական — ցեղայնական դաշնակցութիւն՝ դրանք բոլորը չեն կարող համընթաց լինել, և վերջինս անպատճառ տեղի պիտի տայ:

Ի հարկէ պատմութեան այդ շրջադարձի մէջ կորչելու խնդիրը ժողովուրդների մեծադանդուածութեան և փոքրազանգուածութեան հետ կապ չի կարող ունենալ, այլ նրանց ունեցած կենսականութեան և պատմութեան ներկայացրած խնդիրների վճռուելուն ազգակ լինելուն կամ չլինելուն: Պատմութեան մէջ մեծածաւալ ժողովուրդները նոյնքան դիւրութեամբ են կորչել, որքան փոքրածաւալները, և ուրիշ էլ՝ շատ մեծածաւալներ կորչել են, իսկ փոքրածաւալներ՝ զարգացել և մարդկային ազգի պատմութեան մէջ դեր ստանձնել: Խնդիրը, ուրեմն, տեսութեան բացարձակութեան մասին չէ, այլ թէ այդպէս է լինում, այդպէս կարող է լինել, երբ երկու ոյժեր՝ միմյանց յառաջդիմութիւն, քաղաքակրթութիւն, կուլտուրա ներկայացնող, իսկ միւսը՝ յետադիմութիւն, բարբարոսութիւն և բրտութիւն:

Բայց մի թէզ կայ, որ իսկական սօցիալիստը իր բոլոր գործունէութեան և շարժումների մէջ միշտ աչքի առած պիտի ունենայ, — դա Բեքելի հետևեալ եզրակացութիւնն է:

«Ամէն ազգ, որ իր սեպհական լեզուն, իր սեպհական բարձր ու վարքը, իր սեպհական քաղաքակրթութիւնը և պատմութիւնը ունի, այդպիսի ազգ իրաւունք ունի զարգանալու որպէս օրգանական մի ամբողջութիւն» — Եւ այդպիսի մի իրաւունք, աւելացնում ենք մենք, Թուրքիայի նման մի պետութեան մէջ, կարող է իրականութիւն ստանալ միայն ինքնավարութեան սխառեմով և ոչ թէ բացարձակ կեղծանացման:

Այստեղից պարզ է, որ ճշմարիտ սօցիալիստի համար պետական գոյութեան պատճառներ, պետական ամբողջութեան շահեր չեն կարող լինել. — այդպիսի նկատումներով

* la vie socialiste, — Բեքելի պատասխանը Հայրենիքի և Սօցիալիզմի յարաբերութեան խնդրում:

առաջնորդուել են բայցարձակապետութեան թերեւորութեանը, որոնք ամէն ինչ զոհ էին բերում պետական ամբողջութեան Մոլոխին:

Ամէն ժողովուրդ՝ անկախ կամ ոչ, իր սեպհական բախտը անորինքու անձեռնմխելի իրաւունքն ունի, — սա առաջին և էական սկզբունքն է:

Եթէ մի ժողովուրդ այդ անձեռնմխելի իրաւունքն ունի, հարց, այդ իրաւունքի գործադրութիւնը հնարաւոր է, համապատասխան է սոցիալիզմի սկզբունքներին և պրոլետարական ազատագրութեան գործին: — Եթէ ոչ, ապա նրան ոչմ պիտի տալ ամբողջ թափով, ամենայն անկերպարահալութեամբ: Իսկ եթէ ոչ, ապա այդ ուղղութեան դէմ պիտի ծառանդուել:

Արդ, ծածկաւաշայ ժողովրդի Դատը առաջին թէ՛ վերջին հանգամանքն ունի:

Մենք ձգտել ենք "Ազատ", "Անկախ Հայաստան" ի դադարի իրաւորո՞ւմանը: — յաջողուել է՝ չհաջողուել է՝ այս բառերով խնդիր չէ. այլ այն՝ թէ ինչմով է նա հակառակ եղել սոցիալիզմին, քանի որ սոցիալիզմը և Հայկական Դատ համընթաց են եղել մեր գործունէութեան մէջ:

Եւ այժմ, երբ մեզ առում է թէ այդ ուղին պէտք է թողնել, որովհետեւ դա ներկայ պայմաններում անիրագործելի կամ գծուար իրադրութիւն է ու մեզ առաջարկում է ընդհանուր Թիւրքիայի վերածնութեան գործը ընդգրկել: — այն ժամանակ մենք ատում ենք, թէ միայն առաջարկը հերքել չէ, որ մենք մեր վերքը թողնենք: Նախ ցոյց տուեցէք մեզ այն պայմանները, որոնք իրագործելի և կարելի են դարձնում ամբողջ Թիւրքիայի վերածնութիւնը և նորագոյն պետութիւն դարձնելու հանգամանքը, որոնք են պատմական այդ միասնայի տարրերը: Երկուստաւոր թուրքերը, — նրանք չկան, նրանց մի ծառի հետեւում զարգախարհները աւելի փնտաւար են, քան ծերունի թիւրքերինը: Արդեօք պատմական այդ կտուցը իրենց վրան են ուղղում առնել թիւրք կայսրութեան մէջ եղող ժողովուրդները և նրանց բերան եղող կուսակցութիւնները: — Ի՞նչ են նրանք, մենք ուզում ենք, որ մեզ այդ ծառանիշեն, — այդ Արաբիան, Մակեդոնիան, Ալբանիան, Սլաւիան է:

Իսկ թուրք ծառան, նա ի՞նչ է ասում: — Ահա հարցեր, որոնք դրական պատասխան կուզեն և թոյլ չեն տալ մի ժողովրդի ճակատագրի հետ խաղալ բաւերով, ցանկաւ թիւններով և երազներով:

Եւ երբ այդ բարբի մէջ, մենք բերում ենք մեր հայեցակէտը, մեր առաջարկը և թուրք կայսրութեան պատմութիւնը, այդ կայսրութեան մէջ պարփակուած ժողովրդների կեանքն ու ձգտումները ճանաչելուց յետոյ ասում ենք՝ թէ Թիւրքիան ն ուրազ ու ինչ ու ինչ, նրան վերածնեցնելու — եթէ կարելի է — էական պայմանն է այդ կայսրութեան ծառը կազմող, կենսականութիւնը ներկայացնող ժողովրդներին կազմակերպել քաղաքական ինքնապարական հողի վրայ և ապա տեղեւոր պետական ընդհանուր հաստատութիւններ, որոնք այդ ինքնապարականութիւնների միացուցիչ հանդուցը և ամբողջութիւնը կազմող կեդրոնը լինեն: — այն ժամանակ մեզ տալիս են ազգայնական ձգտումներ, ինչոր դուրս է իրականութիւնից:

Եւ նա՛ ու՛ կարծում, ու՛ կենթադրում է թէ Թիւրքիան կարելի է վերածնեցնել կեդրոնական քաղաքական մի հաստատութիւն ստեղծելով, Միահաստի Մահմադարութիւնից աւելի կամ պակաս լայն հիմունքներով, — նա չարաչար սխալում է, կնշանակի թէ այդպիսին չզիտէ Արեւելեան Խնդրի պատմութեան իրադարձութիւնները, տեղեկութիւն չունի Թիւրքիայի բաղկացուցիչ ազգութիւնների ձգտումներից և ներկայացրած կենսականութեան պայմաններից ու թուրք տարրի ի՛նչ լինելուց, և այսպէս մտածողներին ասում ենք, որ դուք երազի մէջ էք, և դրանով Թիւրքիայի անկման առաջը չէք կարող առնել:

Թիւրքիան վերածնեցնել կարողանալու, եթէ հնար լինի, առաջին և էական պայմանն է, այդ երկրին մէջ գտնուող զարգացած և ինքնուրոյն կեանք ներկայացնող ժողովրդներին տալ քաղաքական ինքնապարականութիւն և ստեղծել քաղաքական կեդրոնական հաստատութիւններ (Պարլամենտ) ռաճկապարական հիմունքներով:

Սա առաջին պայմանն է փոխադարձ համերաշխութեան և աջակցութեան, որովհետեւ ոչ ժողովուրդները կարող են

ինքնապարականութիւնը գործել, ոչ էլ կուսակցութիւնները:

Որպէսզի այդպիսի միջոտակայ նպատակի կարելի լինի հասնել, հարկաւոր է որ ամէն ազգի մէջ գործող կուսակցութիւններ երկան զան և սոցիալական սկզբունքներով առաջնորդուեն, ընդունելով, ձուտարապէս, ներքին կազմական այն կանոնադրը, ինչոր ունեն առարկական Սոցիալ-Դեմոկրատները:

Այս կարելի է. — ապա, զուցէ, կարելի լինի յուսով Թիւրքիայի ընդհանուր փրկութիւնը: Իսկ եթէ ոչ, էլ ինչմով խաբէ-խաբէսով և պատրանքներով ժամանակ անցնել, կլինի այն, ինչոր պիտի լինի, — այսինքն՝ կ'ա՛մ Թիւրքիան կը բաժանուի երոտական պետութիւններ ծիջել, կ'ա՛մ նրա գաւառան մասերը իր բաղկացուցիչ ազգութիւններին կերթան և կ'ա՛մ այդ երկիրը երոտական միջադպշին կծարօլի տակը կանցնի: Իրանցից ո՞րը կլինի, — մենք դրական ոչինչ չենք կարող ասել, բայց քանի որ պայքարելու հող ունինք, մենք պիտի պայքարենք մինչև վերջին շունչ:

Իսկ այս խառնափնդորութիւնների մէջ, երբ սովորական բռնապետութեան, թուրք ազգայնականութեան և մոլեոսնորութեան աղբակները հայ ժողովրդին ջնջելը իրենց համաձայնութեան ընդհանուր նշանաբանն են արել, երբ այդ բռնապետութիւնը մեր արիւնով, մեր բազուկներով թուրքացի և հոգեվարքի դուրսեան ենք հասցրել, երբ մի հրաքանդ, մի վնասարը տանական կեանքերի փրկողը պիտի լինի, մենք չենք այն բարի քրիստոնէական երբ, որ երբ հարկը տարուայ խնդիրը քաղաքանի մի հարուածով հարկներ, և թողնենք մեր զիրքը, ու ետթաղանք մեր գլխին շողաքնայներին թուրք ընդհանուր կայսրութեան վերածնութիւնը քարոզենք, — և դա չի լինիլ սոցիալիզմի, պրոլետարական ազատագրութեան գործի պաշտպանութիւն, այլ ստրկութեան, վատութեան, մարդկային սողունութեան:

Ո՛չ, մենք պէտք է ասլինք, որովհետեւ ուզում ենք ապրել, որովհետեւ ապրելու պայմաններ ունենք, որովհետեւ մեր կեանքը սոցիալիզմի և պրոլետարական ազատագրութեան գործին պէտք է:

Թող ապրի Թիւրքիան, դրան հակառակ չենք, բայց ապրի և՛ Հայաստանը:

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻՐԻՆԻՆ

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՆԵՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Վանայ նախկին վալին՝ Թահիր փաշան պաշտօնանկ լինելով և "Իթիլիա հրէշը" վեղբրութեան հասնելով, ասկէ կարելի էր գուշակել թէ երկուքը ինչ ծանաւոր քաղաքականութեան պիտի հետեւէր դէպի Վանի վերայէթը:

Պալատական արքանեակ Հաճի Ալի փաշայի փեսային Վանայ վալի ընտրուել և ուղարկուիլը յայտարար նշան էր գլխուս դալիքին: Երբ նորընտիր վալին առաջին անգամ իր պաշտօնատեղին՝ Վան հասաւ, առաջին խօսքը որ ըրաւ, դա Թէրիկ Ասատէղլին փաշայի (Վանայ 96-ի ջարդի կազմակերպողը) ծախն եղաւ: Առաջին քարը գորուեցաւ: Եթէ առաջ թուրք ազգայնականութիւնը և պաշտօնեաները մեղմ ընթաց էին բռնած դէպի հայերը, ատիկա ալ պարզապէս Թահիր փաշայի սիրաշահող քաղաքականութեան հետեւանքն էր: Բայց Թիւրքիոյ մէջ ամէն վալի իր սեպհական քաղաքականութիւնը կարող է ունենալ, այլ էր Թահիր փաշայինը, այլ՝ հիմնականինը:

Տեղական առաջնորդական գործերը վարող քահանան վալիի խիտ վարմունքը տեսնելով՝ գանգատում է այդ ընթացքի դէմ, ըսելով որ ինքը և քաղաքական ժողովի անդամները կը հրաժարին, եթէ իր գանգատները չլուսն և սկսուած խառնութիւնները չմեղմանան: Քահանայի խօսքերը անհետեւանք կմնան, ան իր և քաղաքական ժողովի հրաժարականը կը հեռագրէ Պատրիարքարան: Վալին կատրեց, պահանջեց որ "փափաղը" իր հրաժարականը յետ առնէ: Խնդիրը կարգադրուեցաւ նրանով, որ Պատրիարքարանը չընդունեց հրա-

ժարականները և այդպիսով խրախուսեց վալին՝ իրաւունքը անոր տալով: Վալին ա՛լ աւելի կատգեցաւ:

Այի պէջը համոզուած լինելով՝ որ ժողովուրդը մը փճացնելու արձատական միջոցն է զայն նախ տնտեսապէս քայքայել, կը հրամայէ 23 տարուայ յետնեալ տուրքերը գանձել ամենայն խտութեամբ: 96-ի սոսկալի ջարդին ու հըր-դեհին շատ մը թաղեր ու գիւղեր բոլորովին այրուեցան և ուրեմն տուրքի տոմարներն ալ փճացան, այնպէս որ ոչ ոք ճիշտ չգիտէ թէ այս ինչ թաղ կամ գիւղ որքան պ ա գ ը յա (յետնեալ տուրք) ունի և որ անձ՝ ինչքան պարտական է: Սակայն կառավարութիւնը այդ բանը չի ճանչնար, իւրաքանչիւր թաղէն ու գիւղէն իր ուզած և որոշած գումարին համեմատ պահանջ կը դնէ: Թողունք՝ որ գիւղերէն առհասարակ ամէն կարգի պաշտօնեաներ զացած՝ գումար մը առած են՝ երբեմն պարզ ստորագրութիւն տալով, երբեմն ալ՝ ոչ, և ահա կառավարութիւնը այժմ այդ ստորագրութիւններն ալ չի ճանչնար:

Երկու ամսէ ի վեր քաղաքիս մէջ աներևակայելի խռտութիւններով կը գանձեն, 23 տարիներէ ի վեր, յետնեալ տուրքերը: Տուններէն ամէն տեսակ կահ կարասիներ կը քաշեն և կէս, քառորդ գնով կը ծախեն: Յաճախ տեսնուեցաւ թէ ինչպէս մի թշուառ ընտանիքի հազիւ 2-3 օր բաւելու չափ ունեցած պարէնը ծախուեցաւ. այգիներէն նոյն իսկ պտղատու ծառեր կտրուեցան և ծախուեցան ամենաչնչին գներով: Հապա այդ լիբը ու վալինի ոստիկաններու ձեռն ու հայհոյանքը, մոլեգնութիւնները և յոխորտանքները՝ . . . Ոչ մի մարդ, նոյն իսկ հարիւրամեայ ծերունիները այս առտիճան խիստ թ ա հ ս ի լ ա թ (գանձումն) չեն յիշեր: Ծառնեակ տարիներէ ի վեր կառավարութեան սնտուկները դատարկ էին և մէջը, ինչպէս կըսեն, «մուկերը ճիւղի կը խաղային», սակայն այսօր ոսկիներու ծանրութենէն կը ճուռն և 1,000-աւոր ոսկիներ Պոլիս կուղարկուին, մինչ առաջները հոս ուրիշ վիլայէթներէ դրամ կուղարկէին կառավարական պէտքերու համար:

Թուրքերը առհասարակ մեր կողմերը շատ չնչին տուրք կը վճարեն: Կառավարութիւնը միայն երևոյթ վրկելու համար անոնց հետ ալ քիչ մը խիստ վարուեցաւ, բայց միայն խօսքով, զոգո՛հ թուրք տարը յայտարարութիւն փակցուց, բայց լուրջ ո՛չ մի հետևանք չունեցաւ: Վերջին օրերս հոս խօսուեցաւ թէ հեռագիրը հաղորդած է, որ անասնոց և անձնական տուրքերը շնորհուած են, բայց մենք դեռ բան մը տեսած չունինք: Եթէ իրաւ է, ասոնք անշուշտ հետևանք ըլլալու են Երզրուծի և Գասթէմունի շարժումներուն:

Մենք առիթ փախցուցած չենք մեր հարեան թուրք ինտէլիգենտներուն յորդորելու, որ իրենք ալ կազմակերպուին, շարժուին և հրապարակ գան նոր թափով և ոյժով, բայց պէտք եղած յանդիմութիւնը և կորովը իրենց կը պակսի:

Քաղաք թափուող աղքատ գիւղացիներու, մանաւանդ կանանց և երեխաներու կծախքացած և՛ դալկացած դէմքն ու մերկութիւնը մարդ երբ կը տեսնէ, — ուղղակի ոսկորները կը տարտան: Կառավարութեան հրէշութիւնները, սղութիւնը, միացած ձմռան երկարութեան և անդործութեան հետ՝ անդամատելով կսպաննեն մեր ժողովուրդը:

Այս տարի թէ միսիօնարները և թէ Պատրիարքարանը նըպաստներ չհասուցին, չնայելով որ այնքան կարիք կայ: Եգիտպահայերը միայն բացառութիւն կազմեցին:

Արտասահմանի բախտաւոր հայեր, նպաստներ հասցուցէք մեր կարօտ եղբայրներուն, մեր մերկ և անպատապար քոյրերուն, որոնք սոսկալի կերպով կը նեղուին Վանայ և Բիթլիսի վիլայէթներուն մէջ:

Տանեակ տարիներէ ի վեր կառավարութեան հետապնդած գաղափարն է եղել՝ «Հայաստան առանց Հայի»: Թոյլ պիտի տա՞նք, որ այդ հրէշային ծրագիրը իրագործուի: Թուրք կառավարութեան բնաջնջման քաղաքականութիւնը մի կողմից, այժմ ալ աւելցաւ սղութիւնը և ատոնց անմիջական հետեւանքն է՝ սեպհականադրութիւն, պօպերիզմ (աղքատացում) և մասսայական գաղթ:

Երկու ամսէ ի վեր մեր կերած հացը մեր գլխին «հարած» է դարձած, հանգստութիւն ըսուած բանը մեզ համար գոյութիւն չունի, ո՛չ աղքատի երեսին ժպիտ կայ, ո՛չ ալ հարուստի: Վանայ հասարակութիւնը, հակառակ իր խիստ զը-

ւարթ բնաւորութեան, գլուխը կա՛խ, ընկճուա՛ծ, մտախո՛հ, մըռա՛յլ, խոր ցաւերու մէջ կը տորորուի: Ամէնքն ալ կզգան, գիտեն թէ մի բան, մի շունչ, մի հոտ կայ մթնոլորտի մէջ, և այդ շունչը, այդ հոտը կուգայ 95-96-ի անդունդներէն: Ամէնքն ալ կը նախազգան, կը խօսին, թէ մի սոսկալի փութորիկ պիտի պայթի Վանայ գլխին, որ այս անգամ իր հրէշային աւերումով շուք պիտի ձգէ 96-ի աղէտի վրան:

Ներկայ կրիսիքական և պատասխանատու րոպէներու մէջ, Վասպուրականի հայ ժողովուրդը ձեզնից շատ բան կուստէ, շնչակեան ընկերներ:

Գալիքին առաջ ի՞նչ պիտի լինի մեր պատասխանը:
ՀՆՁԱԿԵԱՆ ՁԻՆՈՒՈՐ

1907, Ապրիլ 15

ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ

ՄԵՐ ՑԱՒԵՐԸ

Նե՛ղ է, շա՛տ նեղ մեր աշխարհը, չունինք օդ շնչելու, չունինք հաց ուտելու, չունինք մի տեղ նստելու. մերկ ու ոտաբոբիկ, անօթի՝ ու անտաւաղ, խոցոտուա՛ծ սրտով, վիրաւի՛ց մարմնով փակուած ենք մի խոր անդունդի, մի խաւար վիրապի մէջ: Ուր օձերն են գալարուած, ուր դեռուներն են վխտում, ուր գետնաքարշ մարդ-գաղանները կատաղի քրքիջով բզկտում են մեզ ու յռնոտում. արեան հոտ է բուրում ամէն մի անկիւնից. դժգոյն հորիզոնը՝ ծածկուած թղպոտ ամպերով՝ ուզում է նեղանալ, շա՛տ նեղանալ, — սպառնում է խեղդել մեզ: Արիւններու մէջ մտած, արեան հոտով պարուրուած մեր թշուառ ժողովուրդը՝ զրկուած զգայնիկ ջիւղերէ, անասնային անտարբերութեամբ է կրում ամէն ինչ. բայց ո՛չ. գէթ անասունն իր մահուան միջոցին բնազդային մի ճիշ է արձակում՝ վերջին յուսահատ մի շարժում. իսկ մենք այդ ինտրինկաէն ալ զուրկ ենք: Դեսպոտիզմը այն առտիճան նուրբ դիւանդախութեամբ է ընթանում, որ մեզ հասցնում է սա վիճակին — չարձակել գոնէ մահամերձ վիճակի վերջին մրմունջն իսկ:

Աւերի ու զուլումի այս տարին խտովասարսուռ իրականութեան նախադուռն է բաց անում մեր առջև. արձատական ընկեցիան հարուածում է ուժգին թափով ու տապալում ամէն ինչ: Ժիւաղ սուլթանի խրտուխակ Ալի բէյի (տեղւոյս նոր կուսակալը), այդ ալանդակ հիդրալի արեան մէջ փտած ակռաներէն ժայթքող թոյնը քանդում, աւերում է մեր վաթանը:

Մինչդեռ դառն իրականութեանց՝ արեան ու կոտորածներու մահացու հարուածներէն հազիւ ճողորպած ժողովուրդը՝ վանեցին, սկսած էր մի քիչ շունչ առնել. մինչդեռ խոր վերքերու դառնակակիժ մրմուռը հազիւ մեղմացած և մորթոտուած մեր եղբայրներու ու մողաց աղեկուոր ճիւղն ու աղաղակը պահ մը դադրած, դառն սրտով սկսեք էինք մեր հացը վատակիլ. մինչդեռ հայ գիւղացին պատրաստած արօր ու զուլման, եղն ու գոմէշ իր բնասուր ձիւքով նորէն շէնցնելու էր պատրաստում, ահա Երզրուղի-պալատի մէջ մալապատիկ նստող կատաղին, այդ ոճիր-հրէշը փորին մէջ մի գալարում զգաց . . . և նրա հայակեր շրթունքներն սա պատգամն որոտացին՝ «Հաւաքեցէք պախեաներ».—մի հրաման բաւական էր. սուլթանի արբանեակները գիտեն իրանց անելիքը, բաւ է որ լսեն իրանց հօր մաղձի ժայթքումը և անկէ յետոյ գործ չունիս:

Հրամանն ամէնուն էր. Վանի հին կուսակալ՝ գոմշապաւրանոյն Թահիր, իր հարեմի նախշուն սենեկի մէջ նստած, մի քիչ ուշ էր լսած իր փառիշայի կաղկանձը և այդ իսկ բաւական էր զինքը գլխիվար բերելու. նա ընկաւ և ահա մի հրէշ սկսաւ քառամբակել Վոսփորէն դէպի Վան: Դա Ալին էր:

Ալին եկա՛ւ, լսուեց ամէն կողմէն, և ամբոխային տրամաբանութիւնն սկսեց դատել. ո՛րը լաւ էր ասում, որը՝ վատ. խեղճ ժողովուրդը չէր համբերեր մինչև ժամանակին ինքը ուրուէր անոր նկարագիրը: Ժամանակը շատ հեռու էր, երբք օրէն պարզուեց ամէն ինչ, — յօշոտեալ ընդունակներն ամբողջովին, ասպարէզ կանչուեցան. «նման դնման սիրէ» ու սկսուեց դրամայի առաջին արարումը: Թահսիլտարներու սովալլուկ վահճակներ շարժուեցին. ձմեռուան մահաշունչ

Հովհանն ամուսնացած դաշտերու և գիւղերու ամացի ճամբաները մի արտասովոր կենդանութիւն ու շարժում են ցոյց տալիս, ձիերու խոնարհը խառնուած իրենց տէրերու, թահարտարներու անպակաս քաջութեամբ հանդիմանելու խառնուած ճանքերին խառնուած են շրջակայ լուսնային Միջին աշտի գիւղերու հանդիմանելու տէրիչ ներկայութեան ազատ մնացած փողոցները պղծաբանութիւն վերադառնալու թրքական ծանր բանտերը վերադառնալու լեցնելու։ Ամէն ինչ կատարեալ քառու դարձաւ։ Բարձրացան նորէն ողբ ու կոծի աղետալու ձայներ, տաւար ու ոչխար՝ բշտեցին իրենց տաք աստուծոյն, կառավարութեան անյատակ գանձարանը լեցնելու։ Կտարուեց գիւղացիու և արհեստավորի թիւն ու թիկունքը, խորտակուեցին նրանց փայլուն երազները, դարձեցան ալիւս գոյութեան փայլուն հարցը։ Հարուստեպ է մի գիւղ մտնել և չգտնուիլ 10-15 կառուածներու թահարտարներու, որք նստած աստուծի տաք սենեկում, իրենց քեֆն են տարբեր և ամէն մէկն ուզում է իր կեանքի մէջ չտեսնալ ու չկերպար։ Ո՛րն հաւ է ուզում, ո՛րն ձուածեղ, ո՛րն հաւկիթ, ո՛րն փոխնի, ո՛րն կարագ, ո՛րն պանիր, ո՛րն ձերձակ լաւաշ։ Ի հարկէ ձիերն ալ իրանցն են ուզում — մաքուր խոտ և գարի։ Վայրկեան մը չանցած աստուծոյն անպակաս պատրաստ պէտք է լինեն, քիչ ուշանալու դէպքում սկսում է գանձարանութիւն և թրքական հայհարտարներու մի տեղատարաւ։ Բայց ասանք՝ կորեկէ հային իսկ կարօտ գիւղացին, քարերէն իսկ անտառումն հայթայթելու պարտաւոր է։ Կայ մի ուրիշ լավիշ պահանջ՝ որի հանդէպ թշուառ գիւղացին քարացած կայնում է, անկարող ոչ մի որոշ քայլ անելու։ Իսկ նրա ընտանեկան պատիւն է, ընտանեկան սուրբ առաքառաւ պղծումն, որ պազանտացած պաշտօնեան պահանջ է դնում։

Կերպար, լսնային իրենց ուղածները։ Ահա կսկի թահարտարներու գործի շրջանը։ Նրանց պէտք կանգնում է, վերցնում մի ծահակ, ծեծում, ապտակում է զգրին ու գոռալով հրամայում է որ ունեն ու աղաները կանգնէ։ Կալմը ծեծում է միթինգ, գալթիկները միաբերան գոռում են, որ անմիջապէս փող հաւարուի, մէկի բերնէն անգլաւորութեամբ դուրս թուած մի հակառակ խօսք բաւական է զինք գերեզմանոց առաջնորդելու՝ կոտորել իր կեանքի թելը։ Որի հոգ, — մեր խեղճերը թող ընկնեն դէս ու դէն փող ձեռք բերելու, թող ծախեն իրենց ունեցածն ու ապագայ հունձն։ Թող ինչ կերպ կուզեն՝ չարաբանին, տառապին փող ճարելու համար, թող հաստափոր աղաները իրենց թանձրակեղ և զրկւնին քերելով քսակի բերանը բանան՝ սպազային մէկին չորս ստանալու համար, այդ թահարտարներու հոգը չէ, հակառակ պարագային իրանց ձեռքի մէջն են արդէն անոնց տուն ու տեղը, ընտանիքն ու զաւակները, ինչպէս ուզեն՝ այնպէս ալ կ'արուան, այդ մասին խօսք լինել չի կարելի։ . . .

Անցեալները հայոց-առաջին գաւառի մի գիւղում թահարտարները փնային պարտք հաւաքելու և կարելի եղածին աւելի գանձելէն յետոյ, դեռ չբաւականացած կտրտում են պաղատու ծառերը և որովհետեւ գիւղը շատ մօտիկ էր միւսիւրդին, ուստի թահարտարները չէին կրնար իրանց լրբութիւնն ուղածուն չափ գործադրել։ Հոս ալ արական սեռը կուգայ իգական դերը վերցնելու, իրանց քով ծառայութիւն անող պատանի մը գրաւելով այդ լավիշների ուշադրութիւնն, ուզում են բռնաբարել զինք, պատանին հասկանալով նրանց չար դիտարութիւնն՝ մի կերպ հեռանում է և խնդրում գիւղացիներին, որ ուրիշ մէկ մը զրկեն ծառայութեան՝ յայտնելով զապրիկներու անպատկառ նպատակը։ Գիւղացիները մի ծօծեալ ծերունի են զրկում ծառայելու, բայց նրանք կատարած պահանջում են, որ կրկին նոյն տղան գայ, երբ պատասխանում է, թէ նա հիւանդ է, խիթ ունի։ Բորբորում են ու ծեծելով սպանում են մի գիւղացու և ասով գոհ չեղած՝ դեռ մնացած կատարութիւնն ալ թափում են այդ զառամեալ ծերունու վրայ՝ բռնաբարելով զինք . . . Երեւակայեցէք։

Նոյն իսկ բուն քաղաքի մէջն ալ գազանութիւններն իրանց գազանութեան հասած են։ Թահարտարներու անգութ ձեռքը չի վարանի՝ հիւանդներ զրոյն մերկ գետնի վրայ անկողինը ծախելու համար։ Ծառ տուններու առատաւայներ քակուած են անխնայ ու գերանները ծախուած։ Այգիները ամայացած են՝ արձատախիլ լինելով պտղատու ծառերից։ Այո՛, լինում են այս դառն ու կսկծեղ զգացումները մի ուրիշ-հրեշտի՝ սուլթանի ծակ կոկորդը լեցնելու, բայց ի՞նչ, նա չի յագենում։

Ահա մեր դրութիւնը, ահա մեր վիճակը։ Ի՞նչ է, շատ խոր մեր վերքը։ մի պալատան պէտք է մեկ։

ՎԱՆԵՑԻ

1907, Ապրիլ 10

ԱՐԱՍԿԱՆԿ ԿՈՎԱՍՍԻՑ

Յեղափոխական ընկերներ

Բաւական ժամանակ է, ինչ մեր ամենէն ուրուած ՄԱԻՐԱՏԻ, իր "ԼԻԵԼԻ ԼԱՍԻ ԵՆ ՈՒՇ, ՔԼԵՆ ԵՐԲԻԼԻ" լսնային յօդուածով, կոչ էր անում բոլոր հայ յեղափոխականներին, առանց կուսակցական խորութեան, մտածել, քանի ուշ չէ, գոմարելու մի ԿՈՄՄՈՒՆԻՍՏ, որ մի կողմ թողնելով կոչը կուսակցականութիւնը և թայֆայականութիւնը, միջոցներ խորհրդէր միահամուռ ոյժերով օգնութեան հասնելու խեղճ, տանջուած և 1895-96-ի կոտորածներից յետոյ լքուած ծածկահայ ժողովրդին։

Ոչ միայն գիտակց բոլոր յեղափոխականների համար մեծ ցաւ պիտի լինի, եթէ այդ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ-ը չգոմարուի, այլ նրա ուշանալն իսկ դատապարտելի պիտի լինի և զօրաւոր ապացոյց մեր քաղաքական տհասութեանը։

Յեղափոխական ընկերներ

Ծածկահայական Դատի համար գործող խաբարները հայ յեղափոխական կուսակցութեան պարտականութիւնն է որ առաջ գրուի բերել ամենիս համար փափաքելի այդ համապատասխանութիւնը։ Մեր կուսակցականները, եթէ ուզում են հարապատ թարգմանը լինել ժողովրդի կարիքներին և պահանջներին, նրանք պիտի աւապարեն որ առաջ արձագանգ տալ և իրականացնել այդ համակրելի առաջարկը։

Բա՛ւ է, որչափ իրար հարուածեցինք, որչափ իրար հաւաքեցինք, նոյն իսկ իրար կոտորեցինք . . . Մոռանանք տըխուր անցեալը և իբրև նոյն ժողովրդի ցաւերի թարգմաններ, ձեռք ձեռքի տալով, որ առաջ, ժամ առաջ, աշխատենք ի մի գոմարուել և միջոցներ մտածել այն ժողովրդի մասին՝ որի մոտ և արեան հաստածներն ենք մենք։ Յոյց տանք աշխարհին, որ մենք իրօք արժանի ենք Արեւելի կուստուրորդեցներ անուանուելուն և մեր համերաշխութեամբ միութեամբ իջեցնենք սոսկալի օրհասական հարուածը այն բռնակալ շէնքին, որ սպառնում է մեզ թաղել իր փրատակների տակը։

Յեղափոխական ընկեր

Տարիների ընթացքում ծածկահայ ժողովուրդը իր ցաւերի ամոքումը քեզանից է սպասել, քո անունով է երդուել և քո իւրաքանչիւր խօսքը նրա համար սուրբ է եղել։ Յոյց սուր որ արժանի ես այդ բարձր վստահութեանը, — ազիտացիա մղիր քո շրջանում և աշխատիր անկեղծ ու պարտաճանաչ յեղափոխական տարրերին ի մի գոմարել և մտածել բարեբեկու այն ժողովրդի վիճակը, որի անունով գործում ես դու, որի համար մոռացել ես և՛ տուն, և՛ ընտանիք, և՛ հայր, և՛ մայր, և՛ հանգստութիւն, և՛ կեանք, — այդ բոլորը նուիրելով մի խեղճ, տանջուած, ստրկացած ժողովրդի բարօրութեան Սուրբ Գործին։

Հեռա՛ւ մեզանից կոչը եսամոլութիւն և թայֆայականութիւն։ Հաւաքուի՛նք, խտացուի՛նք մեր շարքերը և միահամուռ ոյժերով գլոհ տանք ընդհանուր թշնամու վրայ ու մեր կեանքի գնովը կեանք տանք իրաւագործ մի ժողովրդի։

Ուրեմն ի գործ, ընկերներ,

Յառա՛ջ յանուն սուրբ և վեհ մի գործի։

Կեցցէ՛ մարտնչող հայ ժողովուրդը։

Կեցցէ՛ համերաշխութիւնը։

Կեցցէ՛ միջնակուսակցական Կօմպրէսը։

Անկցի՛ սուլթանականութիւնը։

Artemius

6 Մայիս 1907

ԹԻՖԼԻՉ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴՐԻ ՄԻ ԱԶԴԱԿԸ

Բուլղար Սօցիալ-Դեմոկրատ Կուսակցութիւնը, Բրիքսէի Միջ. Սօց. Գարտուղարութեան ծիծողով, ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԽՆԴՐԻ առթիւ մի ԿԱԶ է ուղղել Միջազգային Սօցիալ-Դեմոկրատիային: Տալիս ենք այդ ԿԱԶԻ էական մասերը:

— «Միջազգայնականի պատմական ինդիւնները մէկն է և՛ ծիծառնուել ամէն նուաճուող ազգերի համար: Ներկայումս Մակեդոնիան է որ գտնուում է ստրկական ամենա-
ճանր դրութեան մէջ: Հակառակ Բերլինի Դաշնագրութեան, որ Մակեդոնիայի ինքնավարութիւնը յայտարարեց, արդէն երե-
սուն տարի է՝ որ այդ երկիրը ենթարկուած է ստրկացման և բնաջնջման բարբարոս ընթացքին:

«Չնայելով Բուլղարիայում արտադատուող գործադա-
կան զօրեղ շարժմանը՝ Բուլղար Սօցիալ-Դեմոկրատիան, իր քաղաքական գործունէութեան մէջ, անդամաւորուած է այն գաղթը պատերազմի յաւիտենական ուրուականով, որ միա-
պետութեանը պատրուակ է ընծայում անսահման կերպով բազմապատկելու իր զօրաբանակը և այդպիսով ո՛չ մի կա-
րելիութիւն չտալու Սօցիալ-Դեմոկրատիային քաղաքական կեանքի մէջ դեր խաղալու: Իրերի այդ դրութիւնը ձեռնադէպ արգելք է հանդիսանում Բուլղարիայի սօցիալիստական շարժ-
մանը:

«Մակեդոնական խնդիրը պիտի շահագրգռի միջազգային ամբողջ պրոլետարիատին, որովհետեւ նրա յանկարծակի և ծանր կերպով վերերևումը ո՛չ միայն Բալքանեան երկրը-
ների խաղաղութեանը կապաւնաչ, այլ ամբողջ Եւրոպայի: Մակեդոնական խնդրի խառնափնդորութիւնը բնորոշող հան-
գամանքներից մէկն էլ այն է, որ Եւրոպական շատ պետու-
թիւնների շահերը և փառասիրութիւնները այնանէլ իրարու են բաղդում և ինչոր մեզ աւելի է զարհուրեցնում, դա այն է՝ որ Մակեդոնիայի ստրկացումը աւելի՛ պարտական ենք եւ-
րոպական պետութիւնների կապիտալիստական և դիւանապի-
տական խորդաւանանքներին:

«Եւրոպական պետութիւնների համար մակեդոնական ստր-
ուկների թափած արիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մի-
ջոց նոր դիջողութիւններ (կոնցէսիաներ) ձեռք բերելու ի դին իրենց համբերութեանը: Կապիտալիստական և միապետա-
կան Եւրոպան մակեդոնական ստրուկներին Թիւրքիային է յանձնել, իսկ սա էլ նրանց բնաջնջում է:

«Մենք կոչ ենք անում Սօցիալիստ Գործադադարական Միջազ-
գայնականին և խնդրում ենք բողոքի ձայն բարձրացնել կա-
պիտալիստ Եւրոպայի այդ գարշելի արարքի դէմ և Մակեդո-
նական ազատութեան համար ուշիատուել:

Այսպէս, ուրեմն, Բուլղար Սօցիալ-Դեմոկրատ Կուսակցութեան կեդրոնական Կոմիտէի անդամները՝ Սակաչով, Պաստուշև, Գիտրով և Բօչլիլի կոչ են անում «սօցիալիստ ընտրուածներին, որ իրենց պարլա-
մէնտների մէջ ձայն բարձրացնեն մակեդոնական ազա-
տութեան համար և բողոքեն թուրք բռնակալական ընթացի և կապիտալիստ Եւրոպայի բռնած զիրքի դէմ, որ ինքնասիրական նպատակի համար համբերատու-
րում է այդ անարգ ստրկութեանը՝ այս 20-րդ դա-
րու սկզբում»:

Բրիքսէի Միջազգային Սօցիալիստական Բիւրօի քարտուղարը իր լիակատար հաւանութիւնը տալով՝ այդ ԿԱԶԸ ուղարկել է բոլոր սօցիալիստ կուսակ-
ցութիւններին:

«L'Humanite»-ի խմբագիրներից մէկը՝ Ժան Լօնգէ այդ ԿԱԶԻ մասին հետեւեալ յաւելումն է անում. «Բուլղարները չեն կարող անտարբեր մնալ դէպի իրենց Մակեդոնիայի հայ-
րենակիցները սիստէմաթիք բնաջնջումը»:

Բուլղար Սօցիալ-Դեմոկրատների այդ «կոչ»ից մի իրողութիւն պարզ է, այն՝ որ նրանք Մակեդո-

նիայի ազատութիւնը չեն տեսնում վերաճնուած Թիւրքիայի մէջ — նրանք պաշտպանում են Մակեդոնիայի ազատազրութեան գործը առանձին և ո՛չ թէ ամ-
բողջ Թիւրքիայի վերանորոգութեան խնդիրը: — Եւ Բրիքսէի Միջ. Սօց. Բիւրօի քարտուղարը չի ասում որ նրանք, այդպիսով, «նաղիծալիստներ», «շօվինիստ-
ներ», «ոչ-սօցիալիստներ» են, և այլ այն բոլոր բառերը, ինչոր ընթացի են մեր մէջ: Իսկ մենք համոզուած ենք որ բուլղար Սօցիալ-Դեմոկրատները աւելի լաւ են ճանաչում Թիւրքիան — որպէս «կոմունիստ» — քան մեր բազմաթիւ սօցիալիստները, որոնք ոչ Թիւր-
քիա են տեսած, ոչ էլ նրա պատմութիւնն են ուսումնասիրած, այլ իրենց բոլոր պատճառաբանու-
թիւնները հիմնում են նմանութիւնների վրայ. — ուսումնական պետութեան ամբողջութիւն, ուրեմն և թրքական պետութեան ամբողջութիւն. բաց չհարց, այդ երկու պետութիւնների միջազգային կացութիւնը և նրանց բաղկացուցիչ տարրերի յարաբերութիւնները նոյնութիւն են կազմում — այդ է ահա ինչիւրը, որ աչքից բաց է թողնում:

Ժան Լօնգէն, որ միջազգային Սօցիալ-Դեմոկ-
րատիայի եռանդուն աշխատակողներըց մէկն է, այն համոզումն ունի, թէ «Բուլղարները չեն կարող ան-
տարբեր մնալ, դէպի իրենց Մակեդոնիայի հայրե-
նակիցների սիստէմաթիք բնաջնջումը»: — Մեր մէջ այդպէս չէ, մեր մէջ կան սօցիալիստներ, որոնք կար-
ծում են թէ իրենք իրաւունք ունին անտարբեր մնալ դէպի ծաճկա-Հայի սիստէմաթիք բնաջնջման գործը, որովհետեւ այդ բնաջնջող ծաճկա-Հայերը գտնուում են սահմանի միւս կողմը և ոչ թէ այս կողմը. ու բացի դրանից՝ իրենք չեն կարող սահմանի միւս կողմը գործ ունենալ, օգնութեան ձեռք կարկառել, որովհետեւ դա կլինէր «նաղիծալիզմ», «պանաւրմէ-
նիզմ», — այսինքն ոչ-սօցիալիզմ:

Մեր այդ կարգի հրապարակախօսները, որ մեր հակաճառողներն են, իրենք «իրենց սօցիալիստական գիտութեանը» հաւատարիմ մնալու համար, անշուշտ վանդելով իրեն և Լօնգէին ոչ-սօցիալիստներ պիտի համարեն ու պիտի շարունակեն իրենց հայելիի մէջ ուղղափառ սօցիալիստներ միայն իրենց տեսնել»:

Էն Դիփէն

ՀԵՌԱԳՐՈՎ

Կառավարութիւնը «ԱՊԱԳՐԱՆ» գրուեց:

ԹԻՖԼԻՉ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ գանձարանում ստացուել են հետեւեալ գումարները. —

«ԿԵԴՐՈՆԱԿԱՆ» Մ. Ղեց	—	—	—	—	1000 ռ.
ՀԱՄԱԳՐՈՎ	—	—	—	—	100 տ.
ՔԵՐՈՍԻՆՆԵՐ	—	—	—	—	600 Ֆ.
ԱՄԵՐԻԿԱՆ ԳՈՐԾ. ՅԱՆՉՆԱՆՄԱՐԻՑ	—	—	—	—	100 "
"	—	—	—	—	144 "
"	—	—	—	—	62 տ.
ԹՐՈՑ. Գ. ԹՈՐՈՑ. Յ. Ժանթէրմուրեանի ծնունդ	—	—	—	—	46 "
Ի նպաստ քաղաքական քանոնակերպ	—	—	—	—	—
Վերջին գումարը նուիրել են. — Թ. Յ. Ժ. 10 50, Յ. Սարգիս- եան՝ 6, Դ. Ժ. 4, Տ. Ս. 2, Մ. Պալտեան՝ 1, Տ. Պալտեան՝ 2, Զարարեան՝ 1 50, Ն. Մ. 1, Ն. Մ. Ժանթէրմուրեան՝ 3, Տ. Մարտիկեան՝ 1, Թ. Զոր- եան՝ 6, Մ. Պէրալեան՝ 1, Գ. Մէլքոնեան 1, Մ. Սիմիկեան 1, Տիկ. Վարդիկեան 1 տուար:					

M. BELLART — 7, Rue Campagne-Première 7,
(France) PARIS.

Imprimeur-Gérant Gabriel FARJAT